Ուսուցչի ձեռնարկ

Ուսուցիչներին ներկայացնել «Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար»-ը

ԽՈՒՆՔՀ

Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար

Ուսուցիչներին ներկայացնել «Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար»-ը

Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Ուսուցչի ձեռնարկ

5-րդ խմբագրում

ԽՈՒՆՔՀ
Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար

Ուսուցիչներին ներկայացնել «Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար»-ը

Ուսուցչի ձեռնարկ
5-րդ խմբագրում
Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Եթե այլ կերպ նշված չէ, աստվածաշնչյան բոլոր մեջբերումներն արված են Trinitarian Bible Society (Tyndale House, Dorset Road, London, SW19 3NN, England)-ի կողմից կատարված ժամանակակից թարգմանությունից:

Copyright © 1978, 2022, Teen Challenge USA.

Այս դասընթացը սկզբում լույս է տեսել անգլերեն, *Introducing Teachers to the Group Studies for New Christians,* 5th edition վերնագրով:

Այս նյութը կարող է վերատպվել և բաժանվել, որպեսզի օգտագործվի Թին Չելենջի, նմանատիպ ծրագրերի, տեղական եկեղեցիների, դպրոցների, այլ կազմակերպությունների և անհատների համար: Այս նյութերը նաև կարող են ներբեռնվել հետևյալ կայքից՝ www.iTeenChallenge.org: Նրանք, ովքեր կցանկանան վաճառել այս նյութերը, պետք է գրավոր թույլտվություն ստանան Գլոբալ Թին Չելենջից:

Այս դասընթացը *Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար* դասընթացի մի մասն է, որը մշակվել է, որպեսզի օգտագործվի եկեղեցիներում, բանտային ծառայություններում, Թին Չելենջում և նմանատիպ ծառայություններում, որտեղ աշխատում են նորադարձ քրիստոնյաների հետ: Դասընթացի մեջ մտնում են՝ Ուսուցչի ձեռնարկը, Ուսանողի ձեռնարկը, Ուսուցման ուղեցույցը, Ստուգարքը և Վկայականը: Դրանց մասին առավել տեղեկություններ ստանալու համար դիմել.

Global Teen Challenge
PO Box 511
Columbus, GA, 31902 USA
Email: gtc@globaltc.org
Web: www.globaltc.org
www.iTeenChallenge.org

ԽՈՒՆՔՀ
Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար

Վերջին անգամ վերանայվել է. 12-2022

Բովանդակություն

Ներածություն.....5

Բաժին 1. Խորհուրդներ «Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար» շարքն ուսուցանելու համար:.....7

Բաժին 2. Սովորեցնելու-սովորելու գործընթաց: 19

Բաժին 3. Օգնություն՝ «Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար» շարքն ուսուցանելու համար:..... 31

Բաժին 4. Նմուշների ձևեր, աշխատանքային թերթիկներ և ավարտական քննություններ «Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար» շարքի համար: 37

Ներածություն

«Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար» (ԽՈՒՆՔՀ) շարքն այն մարդկանց համար է, ովքեր ուզում են աճել: Այս դասընթացների թիրախը նորադարձ կամ պոտենցիալ քրիստոնյաներն են: Յուրաքանչյուր դասընթացի մեջ անձնական կիրառության հստակ կոչ կա: Մեր նպատակն ընդամենը բովանդակությունն ընկալելի դարձնելը չէ: Մենք ուզում ենք, որ յուրաքանչյուր մարդ դառնա Հիսուսի աշակերտը՝ հետևորդը, ոչ թե անվանական, այլ այնպես, որ դա արտացոլվի նրանց կենսակերպի մեջ:

ԽՈՒՆՔՀ դասընթացները շատ ընդարձակ ձևով ներկայացնում են այն կյանքը, որը Հիսուսը մեզ կոչ է անում ապրել: Քրիստոնեական աշակերտությունը կոչ է՝ Հիսուսին հետևել կյանքի բոլոր ասպարեզներում: Սա իրականանում է՝ մեր կյանքի յուրաքանչյուր ասպարեզը նույնականացնելով Աստծո համապատասխան ճշմարտության հետ, իսկ հետո՝ Սուրբ Հոգու զորությամբ ու առաջնորդությամբ սովորելով, թե ինչպես կիրառել այդ ճշմարտություններից յուրաքանչյուրը Հիսուսին հետևելիս:

ԽՈՒՆՔՀ-ի դասընթացները ծրագրված են որպես խմբային դաս անցկացնելու համար, օրինակ՝ ներառական դասախոսություններ, հարցերի ու պատասխանների ժամանակ, քննարկում և ուսումնական այլ մեթոդներ: Բայց և այնպես, այս դասընթացները կարող են անցկացվել նաև մեկ հոգու հետ խնամակալության աշխատանք կատարելիս: Դրանք կարող են օգտագործվել նաև «Անձնական ուսումնասիրություններ նորադարձ քրիստոնյաների համար» ուսումնական ծրագրում, որն օգտագործվում է Թին Չելենջում և ուրիշ ծառայություններում:

Ուսուցչի պատրաստման մի շարք դասընթացներ հասանելի են www.iTeenChallenge.org կայքում: Դրանք ներկայացնում են ԽՈՒՆՔՀ-ի ուսումնական ծրագիրը և գործիքներ, որոնք քեզ կօգնեն ավելի արդյունավետ ուսուցանել այն: Այդ կայքի «Ուսուցման ծրագրեր» (“Training Plans”) բաժնում, ԽՈՒՆՔՀ-ի՝ Ուսուցչի Նախապատրաստության ծրագրի մեջ դու կգտնես առաջարկվող դասընթացները:

Ահա այն հիմնական դասընթացները, որոնք մենք առաջարկում ենք նրանց, ովքեր ցանկանում են դասավանդել ԽՈՒՆՔՀ-ի ուսումնական ծրագիրը.

1. Թին Չելենջի հաջողության բանալիները:
2. Ինչպե՞ս կարող եմ կրթել նորադարձ քրիստոնյային:
3. Ներկայացնել «Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար» շարքը:
4. Դասի ծրագրման հիմքերը:

5. Ուսուցման ստեղծագործական (կրեատիվ) մեթոդներ:
6. Ուսանողներին օգնել Անձնական կիրառության նպատակների հարցում:

Մենք շատ կցանկանայինք, որ դու կարդայիր նաև ուսուցման վերաբերյալ հետևյալ երկու գրքերը.

1. Creative Bible Teaching, հեղինակ՝ Lawrence Richards & Gary Bredfeldt (Moody)
2. Teaching to Change Lives, հեղինակ՝ Howard Hendricks (Multnomah Books)

Այս գրքի հիմնական նպատակը «Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար»-ի նյութերն ուսուցիչներին ներկայացնելն է: Հասանելի են այս շարքի 14 դասընթացների՝ Ուսուցչի ձեռնարկները:

Գրքի առաջին բաժինը որոշ խորհուրդներ է տալիս սույն դասընթացներն ուսուցանելու վերաբերյալ:

Երկրորդ բաժինը՝ «Սովորեցնելու-սովորելու գործընթաց», ցույց է տալիս, թե ուսուցողական հիմնական սկզբունքներն ինչպես են կապված աստվածաշնչյան դասերի հետ նորադարձ քրիստոնյաների համար: Շատ հաճախ մենք տեսնում ենք, որ նորադարձ քրիստոնյաները լցված են Աստվածաշնչի փաստերով, բայց չենք կարողանում ժամանակ հատկացնել, որպեսզի նրանց ցույց տանք, թե ինչպես կիրառեն այդ ճշմարտություններն իրենց առօրյա կյանքում:

Երրորդ բաժինը՝ «Օգնություն՝ ԽՈՒՆՔՀ շարքն ուսուցանելու համար», բացատրում է, թե ինչպես օգտագործել լրացուցիչ նյութերը, որոնք հասանելի են ԽՈՒՆՔՀ-ի դասընթացների համար:

Չորրորդ բաժինը՝ «Նմուշների ձևեր, աշխատանքային թերթիկներ և ավարտական քննություններ ԽՈՒՆՔՀ շարքի համար», ներկայացնում է երկու տեսակի նմուշ: Մեկ նմուշը լրացված է՝ ցույց տալու համար, թե ինչպես պետք է այն օգտագործել: Մյուսը դատարկ նմուշն է: Ներառված են նաև ԽՈՒՆՔՀ-ի բոլոր 14 դասընթացների համար օգտագործվող Ավարտական քննությունները և Պատասխանները:

Տեղական եկեղեցիները նորադարձ քրիստոնյաներին կրթելիս նույնպես օգտագործում են «Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար» շարքը: Փոքրիկ փոփոխություններով այս դասընթացները հեշտությամբ կարող են օգտագործվել տեղական եկեղեցու կամ այլ քրիստոնեական կազմակերպությունների ուսուցման ծրագրում:

Բաժին 1

Խորհուրդներ «Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար» շարքն ուսուցանելու համար

1. Դասընթացների հաջորդականությունը:.....8

2. Աստվածաշնչյան Բանալի ճշմարտության և Բանալի համարի նպատակը:.....9

3. Ինչպես կազմել իմաստալից անձնական կիրառություններ յուրաքանչյուր դասի համար:.....10

4. Բազմազանություն մտցնել դասերի մեջ:.....11

5. Տեսողական օժանդակ նյութեր:.....11

6. Դասի ամենօրյա գնահատում: 13

7. Ներկայացնել հաջորդ նոր դասընթացը: 15

8. Դասարանական հանձնարարություններ և ստուգարքներ:.....15

Ստորև բերվող տեղեկությունները պարունակում են խորհուրդներ նրանց համար, ովքեր «Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար» ուսուցանում են Թին Չելենջի կենտրոններում կամ նմանատիպ քրիստոնեական ծառայություններում:

Շատ եկեղեցիներ նույնպես օգտագործում են այս դասընթացները՝ շաբաթական դասավանդելով միայն մեկ դաս: Այս խորհուրդներից մի մասը կարիք կա հարմարեցնելու տեղական եկեղեցու ուսուցման պայմաններին:

1. Դասընթացների հաջորդականությունը:

ԽՈՒՆՔՀ-ի յուրաքանչյուր դասընթաց ծրագրված է լինել որպես առանձին դասընթաց: Սրա նպատակն այն է, որ երբ նոր ուսանող է մտնում ուսուցման գործընթաց, մեկ շաբաթվա մեջ կարողանա նույն մակարդակի վրա լինել, ինչ մնացած ուսանողների մեծ մասը:

14 դասընթացների մեծ մասը ծրագրված է շաբաթական մեկ անգամ դասավանդելու համար՝ համարելով, որ ուսանողները ԽՈՒՆՔՀ-ի օրական մեկ դաս ունեն, շաբաթական՝ 5 օր: Այս ձևով յուրաքանչյուր երկուշաբթի նրանք նոր դասընթաց կսկսեն:

Ահա ԽՈՒՆՔՀ-ի դասընթացների՝ մեր առաջարկած հաջորդականությունը:

1. Ինչպե՞ս կարող եմ իմանալ, որ ճշմարիտ քրիստոնյա եմ:
2. Թռուցիկ հայացք Աստվածաշնչին:
3. Վերաբերմունքներ:
4. Փորձություններ:
5. Հաջողակ քրիստոնեական կենսակերպ:
6. Աճել ձախողումների միջոցով:
7. Քրիստոնեական պրակտիկա (ներառում է եկեղեցական փոխհարաբերություններ):
8. Հնազանդություն Աստծուն:
9. Հնազանդություն մարդուն:
10. Բարկություն և անձնական իրավունքներ:
11. Ինչպես ուսումնասիրել Աստվածաշունչը:
12. Սեր և ինքնաընդունում:
13. Անձնական փոխհարաբերություններ մարդկանց հետ:
14. Հոգևոր զորությունը և գերբնականը:



Հնարավոր է, որ ավելի լավ լինի այս հաջորդականությունը ներկայացնել շրջանի ձևով, քան թե ցուցակի: Շրջանը բաժանված է 14 շերտերի. 14 կետեր, որտեղից ուսանողը կարող է սկսել այս շարքը: Որտեղից էլ որ ուսանողը սկսելու լինի, այդ նույն դասընթացով էլ կվերջացնի շարքը:

Մենք շատ կցանկանայինք, որ «Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար» շարքի նոր ուսանողը հնարավորինս շուտ մտնի ուսուցման գործընթացի մեջ: Երբեմն նոր ուսանողը կարող է գալ դասընթացի կեսից: Այդ դեպքում դու կարող ես նրան թույլ տալ նստել դասերին, բայց մի՛ պահանջիր, որ դասընթացի վերջում քննություն տա: Այդ կոնկրետ դասընթացը նրա համար կդառնա վերջինը՝ այս շարքի 14 դասընթացներն անցնելիս:

2. Աստվածաշնչյան Բանալի ճշմարտության և Բանալի համարի նպատակը:

Յուրաքանչյուր դասընթացում Ուսուցչի ձեռնարկի յուրաքանչյուր դաս սկսվում է Աստվածաշնչյան Բանալի ճշմարտությամբ ու Բանալի համարով: Դրանք ծրագրված են թե՛ ուսուցչին, թե՛ ուսանողին այդ դասի համար նպատակ տալու համար:

Աստվածաշնչյան Բանալի ճշմարտությունը մեկ նախադասությամբ շարադրում է տվյալ դասի հիմնական գաղափարը կամ արդյունքը, որ մենք ակնկալում ենք դրանից:

Բանալի համարը նախատեսված է տվյալ դասի համար աստվածաշնչյան հիմք ապահովելու նպատակով:

Քեզ համար կարող է օգտակար լինել Աստվածաշնչյան Բանալի ճշմարտությունն ու Բանալի համարը մի մեծ թղթի վրա գրելն ու դասի ժամանակ դասասենյակի պատին փակցնելը:

Դա անելն օգտակար է այն առումով, որ երբ դու ցանկանաս դասի ժամանակ ուսանողների ուշադրությունը կենտրոնացնել դրանց վրա, կարողանաս հեշտությամբ դա անել տեսողական ձևով:

Աստվածաշնչյան Բանալի ճշմարտությունն ու Բանալի համարը քեզ նաև օգնում են, որ դասի քննարկումը պահես թիրախի վրա: Շատ անգամ ուսանողները կարող են հարցեր տալ, որով էլ քննարկումը շեղել մեկ ուրիշ թեմայի ուղղությամբ՝ ոչ այն, որը դուք քննարկում եք տվյալ դասին: Այդ պահին դու կարող ես ասել. «Լավ, եկե՛ք վերադառնանք մեր այսօրվա դասի Աստվածաշնչյան Բանալի ճշմարտությանն ու Բանալի համարին»: Այս ձևով կարող ես ուսանողների ուշադրությունը նորից կենտրոնացնել այն թեմայի վրա, որը դու որոշել ես անցնել այդ օրը:

3. Ինչպես կազմել իմաստալից անձնական կիրառություններ յուրաքանչյուր դասի համար:

ԽՈՒՆՔՀ-ի դասընթացներն ուսուցանելու կարևոր սկզբունքներից մեկն անձնական կիրառությունն է: Մենք չենք ուզում, որ այս դասերը պարզապես լինեն ուսանողներին տեղեկություններ փոխանցելու ժամեր: Եթե չկարողանանք ուսանողներին ներգրավել այս աստվածաշնչյան ուսուցումներն իրենց առօրյա կյանքում կիրառելու գործում, ուրեմն որպես ուսուցիչ մենք ձախողված ենք:

ԽՈՒՆՔՀ-ի՝ Ուսուցչի ձեռնարկի յուրաքանչյուր դասի ծրագրի վերջում մենք քեզ տալիս ենք *Անձնական կիրառության* գործողություն: Ընդ որում, դու քո ուսանողներին ավելի լավ ես ճանաչում այն իմաստով, թե իրենց կյանքում նրանք հատկապես ո՛ր ասպարեզում կարիք ունեն կիրառել այսօրվա քո անցկացրած դասը: Դու ազատ ես ինքնուրույն ծրագրելու *Անձնական կիրառության* գործողությունը:

Դասի անձնական կիրառության գործողությունը կարող է շատ դժվար լինել այն ուսուցչի համար, ով փորձ չունի ուսանողներին օգնելու, որպեսզի նրանք աստվածաշնչյան ճշմարտությունները՝ որպես տվյալ դասի ուսուցման մի մաս, կիրառեն իրենց առօրյա կյանքում: Այնուամենայնիվ, կարևոր է, որ մենք դասարանում խոսենք այն մասին, թե ինչպես պետք է ուսանողները կիրառեն տվյալ աստվածաշնչյան ճշմարտությունները:

Դասարանում անձնական կիրառությունը քննարկելու ժամանակը պետք է ավելին լինի, քան պարզապես այսպիսի մի արտահայտություն. «Հիմա եկե՛ք գնանք ու այսօր կիրառենք սա»: Մենք պետք է ժամանակ հատկացնենք հատուկ քննարկելու համար, թե ինչպես կարելի է տվյալ աստվածաշնչյան ճշմարտությունը կիրառել այսօր:

Դու կարող ես ավելի լավ մտքեր ունենալ այս հարցի վերաբերյալ, եթե հաջորդ օրը մի փոքր ժամանակ հատկացնես քննարկելու համար, թե ինչ տեղի ունեցավ, երբ ուսանողը փորձեց վերջին դասի աստվածաշնչյան ճշմարտությունները կիրառել իր առօրյայում: Այս ձևով դու լավ օրինակներ կունենաս առ այն, թե ինչպես են ուսանողները կիրառել տվյալ դասը: Այդ օրինակներով կարող ես կիսվել դասարանում, երբ հաջորդ անգամ նույն դասը դասավանդելու լինես:

Մեկ այլ իմաստալից քայլ, որ դու՝ որպես ուսուցիչ, կարող ես անել, դա աստվածաշնչյան ճշմարտությունները քո սեփական կյանքում կիրառելն է: Երբեմն մենք չենք կարողանում հասկանալ, թե ինչպես կարելի է տվյալ աստվածաշնչյան ճշմարտությունը կիրառել, որովհետև երբեք դա չենք արել մեր կյանքում: Մենք գիտենք ճշմարտությունը, մենք հասկանում ենք ճշմարտությունը,

բայց երբեք ժամանակ չենք հատկացրել այն իրոք մեր կյանքում գործի դնելու համար: Սա նաև դասի մեջ նոր ստեղծագործական մոտեցում և խանդավառություն բերելու շատ իմաստալից ձև է այն բանից հետո, երբ դու արդեն մի քանի անգամ այն դասավանդել ես: Երբ դու սկսես նոր ձևով այն կիրառել քո, ինչպես նաև՝ քո ուսանողների կյանքում, դա կօգնի քեզ՝ նյութը միշտ թարմ ու նոր պահելու:

4. Բազմազանություն մտցնել դասերի մեջ:

Մեր ուսանողները սիրում են բազմազանություն: Խնդիրն այն է, որ ուսուցչի համար երբեմն դժվար է ստեղծագործական (կրեատիվ) լինել: Դու կարող ես մտածել այն մասին, որ յուրաքանչյուր դասի մեջ Աստվածաշնչից մի պատմություն ներկառուցես, որը լավ օրինակ կլինի *Աստվածաշնչյան բանալի ճշմարտության* համար:

Փորձի՛ր ուսանողներին ակտիվորեն ներգրավել դասի մեջ: Հարցե՛ր տուր: Քաջալերի՛ր, որ քո դասավանդման ժամանակ նրանք էլ հարցեր տան: Հնարավորությո՛ւն տուր, որ նրանք կարդան աստվածաշնչյան համարները: Թո՛ւյլ տուր, որ կիսվեն իրենց կյանքի օրինակներով, որոնք կապ ունեն դասարանում քննարկվող թեմայի հետ: Օգտագործի՛ր այդ օրինակները՝ ցույց տալու համար, որ Աստվածաշունչը կապ ունի իրենց կյանքի հետ:

ԽՈՒՆՔՀ-ի՝ Ուսուցչի պատրաստման՝ «Ուսուցման ստեղծագործական մեթոդներ» դասը ներառում է ուսուցման բազմաթիվ մեթոդներ, որոնք դու կարող ես օգտագործել քո դասերի ժամանակ: Ստիպի՛ր քեզ՝ նոր գործողություններ փորձարկելու: Որքան շատ բազմազանություն բերես քո դասարան, այնքան ավելի հավանական է, որ ուսանողները հաճույքով կունկնդրեն և ավելի շատ կմասնակցեն դասերին:

5. Տեսողական օժանդակ նյութեր:

Մենք ապրում ենք մի մշակույթում, որտեղ մեծ շեշտ կա տեսողականի վրա: Մեր ուսուցման մեթոդները պետք է արտացոլեն դա:

www.iTeenChallenge.org կայքում կգտնես ԽՈՒՆՔՀ-ի դասընթացներից շատերի PowerPoint տարբերակը: Դու հեշտությամբ կարող ես վերանայել դրանք և համապատասխանեցնել քո ուսանողների համար: Դա անելու ձևերից մեկը քո ուսանողների լուսանկարները դրանց մեջ ներառելն է:

Դասարանում սովորաբար ունենում են ֆլոմաստերի գրատախտակ: Մի քանի գունավոր ֆլոմաստերներ կարող են դասավանդման պրոցեսն ավելի հետաքրքիր դարձնել:

Ուսուցչի ձեռնարկի՝ դասի ծրագրի մեջ դու ժամանակ առ ժամանակ կարող ես տեսնել հղումներ տեսողական օժանդակ նյութերին կամ աղյուսակներին: Մեծ մասամբ աղյուսակները ներառված են Ուսուցչի դասի ծրագրերի կամ Ուսանողի ձեռնարկի մեջ: Դու կարող ես օգտագործել տեսապրոյեկտոր դրանք էկրանի վրա ցուցադրելու համար:

Կարող ես նաև աղյուսակներ կամ պլակատներ կազմել մեծ թղթի վրա և դրանք փակցնել դասասենյակի պատին: Դրա համար անհրաժեշտ է մեծ չափի ստվարաթուղթ գնել կամ ձեռք բերել մոտակա տպագրատանը:

Այս տեսողական օժանդակ նյութերը ստեղծելու գործը քո փոխարեն հանձնարարի՛ր ուսանողներից մեկին: Այդ աշխատանքը նրանց մեջ ավելի կամրապնդի դասավանդվող նյութը, որը դու կանցկացնես այդ դասին:

Ի՞նչ տեղեկությունների համար օգտակար կլինեն տեսողական օժանդակ նյութերը: Հաճախ օգտակար կլինի դասի բովանդակության ուրվագիծը տեսողական դարձնելը: Օրինակ, «Հոգևոր զորությունը և գերբնականը» դասընթացի 2-րդ դասը խոսում է չորս բառեր սահմանելու մասին՝ հավատ, հավատալիք, վստահություն և հույս: Օգտակար կլինի այս չորս բառերը գրել մեծ թղթի վրա: Դու այն կարող ես փակցնել պատին և ողջ դասընթացի ժամանակ հղում անել դրան:

Ահա մեկ ուրիշ օրինակ «Փորձություններ» դասընթացից: Փորձությունները հաղթահարելու մասին խոսելիս օգտակար կլինի այդ քայլերի ցանկը տեսողական օժանդակ նյութերի ձևով ներկայացնելը, որպեսզի դու կարողանաս այն օգտագործել դասարանական քննարկման ժամանակ, ինչպես նաև՝ օրվա ընթացքում դա վերանայելիս:

Որոշ դեպքերում դու պարզապես կարող ես գրել բաժնի վերնագիրը և թույլ տալ, որ ուսանողները գրեն իրենց պատասխանները: Օրինակ, «Անձնական փոխհարաբերություններ մարդկանց հետ» դասընթացի՝ «ժամադրություն» բաժնի հարցերից մեկն է՝ «Որո՞նք են ժամադրության վտանգները»: Դու կարող ես պարզապես գրել այդ հարցը գրատախտակի վրա, և թույլ տալ, որ ուսանողները կիսվեն իրենց պատասխաններով: Քննարկման վերջում կարող ես ավելացնել լրացուցիչ կետեր, որոնք կցանկանայիր, որ ուսանողներն իմանային:

Մենք վստահաբար խորհուրդ ենք տալիս, որ ուսանողները դասարանում նշումներ անեն: Ուսումնասիրելու համար լավ սովորություններ զարգացնելը մեր նպատակներից մեկն է՝ ուղղված յուրաքանչյուր ուսանողի բարեկրթությանը: Տեսողական օժանդակ նյութերը կարող են նրանց կոնկրետ մտքեր հուշել, թե ինչ գրի առնեն՝ որպես դասի նշում:

6. Դասի ամենօրյա գնահատում:

ԽՈՒՆՔՀ-ի դասընթացները ծրագրված են երեք կամ չորս ամսվա փուլերի ընթացքում դասավանդելու համար, որտեղ նոր ուսանողները կարող են մուտք գործել յուրաքանչյուր շաբաթ: Երբ ողջ շարքի բոլոր 14 դասընթացներն ավարտվում են, ուսուցիչները նորից են սկսում այդ շարքը:

Շատ հավանական է, որ մեկ ուսուցիչը հնարավորություն ունենա նույն դասընթացը դասավանդել տարեկան երեք կամ չորս անգամ: Եթե դու զգույշ չլինես, սա կարող է դառնալ ձանձրալի և կրկնվող: Ուսուցիչների մեծ մասի համար մարտահրավերներից մեկը այս դասընթացները դասավանդելուն ավելի ստեղծագործաբար մոտենալն է:

Քո ուսուցման ընթացքն ավելի արդյունավետ դարձնելու ձևերից մեկն այն է, որ ամեն օր՝ դասից անմիջապես հետո, նստես և մի քանի մտքեր գրես՝ դասին գնահատական տալու համար: Դու կարող ես գրել, թե ինչ ես անցել և թե որքանով ես լավ անցկացրել այն, ինչ ուզում էիր: Կարող ես գրել քննարկման ժամանակ օգտագործած առանցքային հարցերը: Դու կարող ես գրել նաև անձնական կիրառման վերաբերյալ մտքերը և այլ մտքեր, որոնք քեզ կօգնեն հաջորդ անգամ ավելի լավ դասավանդել: (Հաջորդ էջում ներկայացվում է լրացուցիչ խորհուրդներով կամ ցուցումներով մի ձև՝ դասի ամենօրյա գնահատման համար):

Կարևոր է՝ այդ մտքերը գրել՝ հնարավորինս դասի ավարտից շատ չանցած: Մեկ կամ երկու օր հետո, հնարավոր է, այլևս չհիշես այն մտքերը, որոնք ունեիր դասավանդելուց անմիջապես հետո: Խնդրի՛ր Սուրբ Հոգուն, որ քեզ նոր գաղափարներ տա դասը գնահատելու համար:

Քեզ համար կարող է օգտակար լինել՝ նշումներն անել անմիջապես քո՝ Ուսուցչի ձեռնարկի մեջ: Երբ նորից գնաս դասավանդելու, այդ նշումներն այնտեղ կլինեն, և դու դրանք կվերանայես՝ հաջորդ անգամ տվյալ դասընթացն անցկացնելու համար:

Մտքեր, ցուցումներ դասի ամենօրյա գնահատման համար:

1. Դասն ավարտելուց հետո ընդամենը մի քանի րոպե հատկացրո՛ւ, որպեսզի նստես և գրի առնես դասի համառոտ գնահատումը:
2. Նշի՛ր այն դժվարություններն ու խնդիրները, որոնք դու ունեցար դասաժամի ընթացքում (նաև՝ դասի համար նախապատրաստվելիս):
3. Համառոտ բացատրի՛ր, թե որքանով օգտակար եղան Աստվածաշնչյան Բանալի ճշմարտությունն ու Բանալի համարը:
4. Գրի՛ր քո դասավանդած հիմնական կետերը, նաև՝ թե որքան ժամանակ հատկացրեցիր դրանցից յուրաքանչյուրին:
   - Նշի՛ր, թե քո կարծիքով յուրաքանչյուր կետին շա՞տ ժամանակ հատկացրեցիր, թե՞ քիչ:
5. Գնահատի՛ր այս դասի համար քո հիմնական Անձնական կիրառությունը:
   - Նրանք ընկալեցի՞ն:
   - Շա՞տ էր խճճված:
6. Գրի՛ր նոր մտքեր հաջորդ անգամ տվյալ դասն անցկացնելու համար:
7. Թվարկի՛ր օգտագործված օրինակները:
8. Այլ մտքեր:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

7. Ներկայացնել հաջորդ նոր դասընթացը:

Գուցե շատ օգտակա՞ր լինի՝ նոր դասընթացը ներկայացնել դրա դասավանդումն սկսելուց առնվազն մեկ օր առաջ: Շատ դասընթացներում Ուսուցման ուղեցույցի առաջին նախագիծը պետք է լրացված լինի՝ նախքան առաջին դասաժամը սկսելը (օրինակ՝ «Հոգևոր զորությունը և գերբնականը», «Բարկություն և անձնական իրավունքներ», «Քրիստոնեական պրակտիկա»):

Դու հեշտությամբ կարող ես նոր դասընթացը ներկայացնել այն նույն օրը, երբ ստուգարք ես ընդունում հենց նոր ավարտած դասընթացի համար: Նախքան ստուգարքը, ժամանա՛կ հատկացրու համառոտ բացատրելու համար, թե ինչ են սովորելու հաջորդ անգամ: Բաժանի՛ր Ուսանողի ձեռնարկը և Ուսուցման ուղեցույցը նոր դասընթացի համար:

Թող նրանք բացեն Դասարանական հանձնարարության ցուցակի դատարկ բլանկը, որն Ուսուցման ուղեցույցի վերջում է, և լրացնեն հարցաշարերի, հանձնարարությունների և ստուգարքի ամսաթվերը: Անպայման պարզաբանի՛ր, թե Ուսանողի ձեռնարկի ո՛ր էջերը պետք է կարդան և Ուսուցման ուղեցույցի ո՛ր նախագծերը պետք է լրացնեն՝ նախքան առաջին դասաժամը:

8. Դասարանական հանձնարարություններ և ստուգարքներ:

Ա. Գնահատական դնել Ուսուցման ուղեցույցի նախագծերին:

Մենք առաջարկում ենք, որ Ուսուցման ուղեցույցի նախագծերը պարզապես գնահատել *«հանձնած»* կամ *«չհանձնած»,* ոչ թե ամեն մեկին առանձին գնահատական դնել:

«Հանձնած» գնահատականի պահանջները դու կարող ես ներկայացնել այնքան խիստ, որքան ուզում ես: Եթե ուսանողը «չհանձնած» գնահատական է ստանում, ուրեմն պետք է ուղղի իր սխալները և նորից հանձնի այն՝ նախքան այդ դասընթացի վերջում քննություն հանձնելը:

Մի նախազգուշացում: Շատ ուսուցիչներ չափից ավելի են աշխատում և շատ բաների մեջ են խորանում: Դրա հետևանքով հեշտությամբ կարելի է հետ ընկնել ուսանողների տնային աշխատանքներն ու հարցաշարերը ստուգելիս: Իրոք, կարևոր է՝ ուսանողների տնային աշխատանքներն ու ստուգարքներն արագ

գնահատել՝ 24 ժամից պակաս ժամանակահատվածում, կամ նախքան հաջորդ դասաժամի սկսվելը:

Ի՞նչ օգտակար արդյունքներ ես դու ակնկալում, որ ուսանողները կստանան տվյալ հանձնարարություններն անելուց հետո: Անմիջապես տրված քո արձագանքը կարող է դրական կերպով ազդել ուսանողների մղումների վրա: Նրանք քո արագ արձագանքն ընկալում են որպես իրենց և իրենց կատարած աշխատանքի հանդեպ քո հետաքրքրության հստակ նշան: Դու շատ օգտակար դիտարկումներ կարող ես ունենալ՝ կապված նրանց ընթացիկ աճի հետ, եթե նրանց թղթերը գնահատես այն նույն օրը, երբ դրանք հանձնում են քեզ: Նաև հնարավորություն կունենաս անմիջապես զբաղվել նրանց խնդիրներով:

Փորձի՛ր յուրաքանչյուր նախագծի համար գրել գոնե մեկ դրական բան: Մի քանի քաջալերական խոսքերը կարող են նրանց մղումների համար լուրջ ազդակ լինել, որպեսզի շարունակեն ավելի ժրաջան աշխատել դասարանում:

Բ. Հարցաշարեր:

ԽՈՒՆՔՀ-ի բոլոր դասընթացներում մենք խորհուրդ ենք տալիս, որ ուսանողները շաբաթական առնվազն մեկ կամ երկու հարցաշար լրացնեն: Այդ հարցաշարերը հիմնականում վերաբերում են անգիր համարներին: Ուսանողներից նաև պահանջվում է՝ այդ համարները գրել դասընթացի վերջում՝ քննության ժամանակ:

Փորձի՛ր այնպես անել, որ ուսանողներն իրենց հարցաշարերը հետ ստանան հանձնելու հաջորդ օրը: Դա կօգնի նրանց իմանալ, թե որքանով են լավ կատարել դրանք:

Հարցաշարերի հետ կապված մի բան էլ կա. ավելի օգտակար կլինի՝ հարցաշարերը դասաժամի վերջում տալ, քան թե սկզբում: Այս դեպքում հաշվի կառնվի այն հանգամանքը, երբ քո ուսանողները կրթական տարբեր հիմքեր ունենան: Որոշ ուսանողներ գուցե ի վիճակի լինեն հարցաշարն ավարտել 1-2 րոպեում: Մյուսներից, հնարավոր է, մինչև 10 րոպե ժամանակ պահանջվի դրա համար: Եթե դու հարցաշարերը տաս դասի սկզբում, ապա կվատնես դասաժամի շատ թանկարժեք ժամանակը: Եթե տաս դասի վերջում, հարցաշարն ավելի շուտ ավարտած ուսանողները կարող են դուրս գալ դասասենյակից:

Լրացուցիչ միավոր հարցաշարերի համար:

Գրեգ Ֆիշերն (Gregg Fischer) իր ուսանողներին առաջարկում էր լրացուցիչ միավոր վաստակել իրենց որոշ հարցաշարերի դեպքում: Օրինակ. «Ինչպե՞ս կարող եմ իմանալ, որ ճշմարիտ քրիստոնյա եմ» դասընթացում հարցաշարերից մեկն ուսանողներից պահանջում է անգիր անել այն ութ փաստերը, որոնք մարդը

պետք է իմանա և հավատա, որպեսզի դառնա ճշմարիտ քրիստոնյա: Գրեգը լրացուցիչ միավոր էր տալիս, եթե նրանք անգիր անեին նաև այն աստվածաշնչյան համարները, որոնք համընթաց էին այդ ութ փաստերի հետ: Ընդ որում, նա լրացուցիչ միավոր էր տալիս յուրաքանչյուր համարի համար, որը նրանք կարողանում էին անգիր անել և մեջբերել:

Մեկ այլ օրինակ է՝ «Վերաբերմունքներ» դասընթացի հարցաշարը, որտեղ ուսանողներից պահանջվում է անգիր անել աստվածաշնչյան այն վերաբերմունքը, որը պետք է ունենալ, երբ քեզ ուղղում են: Բոլոր կետերի հետ կան համարներ: Լրացուցիչ միավորն այստեղ կարող է տրվել նույն ձևով, ինչպես նախորդ օրինակի դեպքում:

Գ. Ստուգարքներ և վկայականներ ԽՈՒՆՔՀ-ի յուրաքանչյուր դասընթացի համար:

ԽՈՒՆՔՀ-ի ստուգարքների պատասխանները ներառված են տվյալ դասընթացի՝ Ուսուցչի ձեռնարկի վերջում: Ստուգարքները գնահատելիս առնվազն մեկ դրական մեկնաբանությո՛ւն գրիր յուրաքանչյուր ստուգարքի համար: Սա կարող է օգնել՝ առաջ մղել ուսանողներին:

Մենք խորհուրդ ենք տալիս՝ ուսանողներին թույլ չտալ, որ տվյալ դասընթացն ավարտելուց հետո իրենց ստուգարքները պահեն իրենց մոտ: Երբեմն հին ուսանողները ստուգարք հանձնելու ժամանակ սկսում են «օգնել» նոր ուսանողներին:

Որպեսզի քեզ համար հեշտ լինի, քո բոլոր ուսանողներից պահանջի՛ր, որ ստուգարքները հանձնեն դասի համար նախատեսված սովորական ժամանակահատվածում:

Եթե ուսանողները չեն կարողանում հանձնել ԽՈՒՆՔՀ-ի ստուգարքը, կամ չեն կատարել Ուսուցման ուղեցույցի բոլոր նախագծերը, պարզապես ասա՛, որ առաջ գնան և սկսեն նոր դասընթացը մնացած դասարանի հետ: ԽՈՒՆՔՀ-ի բոլոր 14 դասընթացներն ավարտելուց հետո այդ ուսանողները, որոնք առաջին անգամ չեն կարողացել հաջողությամբ ավարտել որոշ նախագծեր, կարող են վերադառնալ և ավարտել դրանք:

ԽՈՒՆՔՀ-ի ամեն մի դասընթացի համար կա վկայական, որը պետք է շնորհվի յուրաքանչյուր ուսանողի՝ տվյալ դասընթացը հաջողությամբ ավարտելու կապակցությամբ: Մենք խորհուրդ ենք տալիս դրանք շնորհել ձեր ուսանողներին յուրաքանչյուր դասընթացն ավարտելուց անմիջապես հետո:

Բաժին 2.

Սովորեցնելու-սովորելու գործընթաց:

1. Ինչի՞ համար են աստվածաշնչյան դասերը:.....20

2. Ի՞նչ ենք մենք սովորեցնում մեր աստվածաշնչյան դասերի ժամանակ: 20

3. Ո՞րն է մեր նպատակն ուսուցման մեջ: 21

4. Ո՞րն է մեր ուսուցման փիլիսոփայությունը: 21

5. Ուսուցչի դերը:.....24

6. Ուսանողի դերը: 27

7. Առաջարկություններ առ այն, թե որտեղից սկսել օգտագործել Սովորեցնելու-սովորելու գործընթացը: 30

1. Ինչի՞ համար են աստվածաշնչյան դասերը:

«Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար» դասընթացներն ունենալու հիմնական պատճառն այն է, որ մեր ուսանողները կարողանան հաջողակ ճշմարիտ քրիստոնյաներ լինել՝ դառնալ Հիսուսի հետևորդ:

Այս աստվածաշնչյան դասերը չեն օգտագործվում ուսանողներին որևէ կոնկրետ հարանվանության հետևորդ դարձնելու համար: Մենք սովորեցնում ենք կյանքի սկզբունքներ, որոնք յուրաքանչյուր անձի կտան հասկացողություն այն մասին, թե ինչպես կարող են հաջողակ կերպով հաղթահարել իրենց խնդիրները:

Մենք աստվածաշնչյան դասեր ունենում ենք, որովհետև գործ ունենք այնպիսի մարդկանց հետ, ովքեր իրենց խնդիրների համար մի պարզ լուծում չունեն: Նման դեպքերում մենք ուսումնասիրում ենք Աստվածաշունչը, որպեսզի գտնենք Աստծո պատասխաններն ուսանողների ունեցած լրջագույն խնդիրների համար:

2. Ի՞նչ ենք մենք սովորեցնում մեր աստվածաշնչյան դասերի ժամանակ:

Մենք սովորեցնում ենք ապրելու սկզբունքներ, որոնք մեր ուսանողներն անմիջապես կարող են կիրառել իրենց կյանքում: Արդյունքում ուսանողները սովորում են գործ ունենալ իրենց խնդիրների հետ և հաջողությամբ փոխել իրենց կենսակերպը: Մենք նրանց սովորեցնում ենք, թե ինչպես ազատվել վատ սովորություններից և ինչպես նոր դրական սովորություններ զարգացնել: Օրինակ, նրանց սովորեցնում ենք հաղթահարել բարկությունը, մեղքի տանող փորձությունները և տիրապետել իրենց զգացմունքներին:

Շատ ուսանողներ կարիք ունեն ազատագրվելու մեղավորության զգացումից: Մենք սովորեցնում ենք, որ մեղավորության զգացումը գալիս է մեղք գործելուց, այսինքն՝ Աստծո օրենքներին չհնազանդվելուց: Միայն Աստված կարող է վերցնել մեղավորության այդ զգացումը, այն էլ՝ երբ մարդն ընդունի, որ մեղք է գործել (անհնազանդ է եղել Աստծուն): Ուսանողները սովորում են, որ հանցավորության զգացման խնդրի միակ ճիշտ լուծումը Հիսուս Քրիստոսին խնդրելն է, որ դառնա իրենց կյանքի Առաջնորդը: Երբ Հիսուս Քրիստոսը դառնում է իրենց կյանքի Առաջնորդը, նրանք ի վիճակի են լինում անել այն, ինչ Նա է ուզում, որ անեն:

Մեր ուսումնական ծրագիրն ուսանողներին սովորեցնում է, որ Հիսուսի հետ փոխհարաբերություն սկսելուց հետո միայն մարդիկ կարող են բարեհաջող հաղթահարել իրենց խնդիրները: Միայն Աստված կարող է մեզ ցանկություն ու

կարողություն տալ, որ ճիշտ ձևով արձագանքենք մեր կյանքում մեզ հանդիպող իրավիճակներին:

Գրեթե բոլորը կարող են իրենց կյանքում կարճ ժամանակով փոքրիկ փոփոխություններ անել: Սակայն միայն Աստծո օգնությամբ է հնարավոր հաջողությամբ հաղթահարել կյանքում հանդիպող բոլոր խնդիրները:
Սա է պատճառը, թե ինչու ենք մենք այդքան մեծ շեշտ դնում Աստծո Խոսքն ուսումնասիրելու վրա:

3. Ո՞րն է մեր նպատակն ուսուցման մեջ:

Ուսուցման մեջ մեր վերջնական նպատակը ուսանողին օգնելն է, որպեսզի նա ավելի մոտենա Աստծուն և անի այն, ինչ Աստված է ուզում: Մենք ուզում ենք յուրաքանչյուր ուսանողի օգնել, նրանք պետք է դադարեն ապրել այնպես, ինչպես մինչ այդ էին ապրում: Նրանք կործանել են իրենց կյանքը ֆիզիկապես՝ օգտագործելով թմրանյութեր, և կատարել են այլ վնասակար գործողություններ սոցիալական ոլորտում՝ մարդկանց հետ իրենց փոխհարաբերությունների մեջ (ընտանիք, կառավարություն, ընկերներ, դպրոց), և հոգևոր ոլորտում՝ Աստծո հետ իրենց փոխհարաբերության մեջ:

Մենք հույս ունենք, որ *«Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար»* դասընթացներն ուսանողներին կօգնեն սովորել, թե ինչպես պետք է նոր կյանք սկսել Աստծո օգնությամբ: Նորադարձ քրիստոնյաները կարող են սովորել, թե որպես տղամարդ կամ որպես կին՝ ինչպես կարող են «կատարյալ և ամբողջական լինել և ոչ մի բանի պակասություն չունենալ» (Հակոբոս 1.4):

4. Ո՞րն է մեր ուսուցման փիլիսոփայությունը:

Ուսուցման մեր փիլիսոփայությունն ուղղակիորեն ազդում է մեր առօրյա նպատակների և ուսուցման մեթոդների վրա: Այս փիլիսոփայությունը կարող է ձևակերպվել երեք պարզ բառով՝ տեղեկություն, հասկացողություն և գործողություն:

Ավելի ուշադիր դիտարկենք այս բաժիններից յուրաքանչյուրը:

Քայլ 1. Տեղեկություն. Իմանալ փաստերը:

ԽՈՒՆՔՀ-ի դասերը ծրագրված են այնպես, որ փոխանցեն հիմնական փաստերը մեր դասավանդած յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ: Այս բաժնի առաջնային նպատակներից մեկը մեր ուսանողներին օգնելն է, որպեսզի բացահայտեն և իմանան փաստերը, որոնք նրանց ասում են, թե ինչ է Աստված

ուզում իրենցից, որ անեն: Հետևաբար, այս բաժնի կարևոր մասն այն կլինի, որ ուսանողներին սովորեցնենք, թե ինչպես այդ փաստերը գտնել Աստվածաշնչում:

Օրինակ, մենք նրանց սովորեցնում ենք հաղթահարել բարկությունը: Ահա մի քանի հարցեր, որոնց պատասխանները մենք կցանկանայինք, որ նրանք գտնեն.

1. Ի՞նչ է բարկությունը (սահմանումը):
2. Ինչո՞ւ եմ ես բարկանում (պատճառը):
3. Ի՞նչ է լինում ինձ հետ, երբ ես բարկանում եմ (հետևանքը):
4. Ինչպե՞ս կարող եմ կանխարգելել բարկությունը (լուծումը. կործանիչ բարկությունից ազատվելու համար հերթական գործողությունների քննարկում):

Կարիք չկա, որ ուսուցիչը տա այս բոլոր հարցերի պատասխանները: Ուսանողներին կարելի է առաջնորդել և աջակցել, որպեսզի շատ փաստեր ինքնուրույն գտնեն՝ օգտագործելով Աստվածաշունչը, համաբարբառը, բառարանները, և կիրառելով իրենց սեփական կյանքի փորձը:

Այդ փաստերն ուսանողներին օգնում են՝ անցնել սովորելու հաջորդ երկու քայլերին:

Քայլ 2. Հասկացողություն. Փաստերը կապել սեփական կյանքի հետ:

Փաստերը մարդկանց չեն փոխում: Սակայն փաստերն են մարդկանց ասում, թե ինչ փոխեն: Այնուամենայնիվ, նախքան որևէ իմաստալից փոփոխության տեղի ունենալը՝ ուսանողները պետք է հասկանան, թե ինչ առնչություն ունեն այդ փաստերն իրենց կյանքի հետ, հատկապես՝ իրենց հանդիպող խնդիրների: Նրանք ոչ միայն պետք է հստակ գիտակցեն, թե ինչ է Աստված ուզում, որ նրանք անեն, այլ նաև հասկանան, թե ինչպես ի կատար ածեն այն, ինչ Աստված ուզում է, որ նրանք անեն:

Ուսանողներն ավելին պետք է իմանան, քան՝ «Ի՞նչն է մարդկանց բարկացնում»: Նրանք այդ տեղեկությունը պետք է կապեն իրենց կյանքի հետ և բացահայտեն, թե՝ «Ի՞նչն է ինձ բարկացնում»: Նրանք պետք է անձնավորեն այդ փաստերը. «Ինչպե՞ս են այս փաստերն ազդում իմ կյանքի վրա»: Հասկանալով, թե ինչպես Աստծո ճշմարտությունները կապեն իրենց կյանքի հետ՝ նրանք պատրաստ են լինում 3-րդ քայլի համար՝ Գործողություն:

Քայլ 3. Գործողություն. Անձնական կիրառություն:

Ուսանողները սկզբում պետք է փաստերի հիմնական տեղեկություններ ստանան խնդրի վերաբերյալ: Այնուհետև, նրանք պետք է այդ փաստերը կապեն իրենց կյանքի հետ: Որից հետո արդեն նրանք պատրաստ են գործողություն կատարելու: Նրանք կարող են սկսել խելացի որոշումներ կայացնել և պարզ ու կոնկրետ նպատակներ դնել՝ այս ուսուցումներն իրենց կյանքի մաս դարձնելու համար:

Իրենց կյանքում հաջողությամբ գործողություններ անելու համար ուսանողը հիմնականում կարիք ունի առնվազն երկու աղբյուրների՝ Աստծո և իր ուսուցչի (կամ համապատասխան ունակություն ունեցող անձնավորության):

Ուսանողներն Աստծո կարիքը կունենան, որովհետև ամենաշատն Աստված կարող է նրանց օգնել հետևյալ երեք կենսական ասպարեզներում.

1) փափագ՝ ճիշտ որոշումներ կայացնելու համար,
2) իմաստություն և հասկացողություն՝ այս ուսուցումները մեր կյանքում կիրառելու համար,
3) զորություն՝ մինչև վերջ գնալու և մեր որոշումն իրագործելու համար:

Ուսանողները սովորաբար կարիք են ունենում ուսուցչի, ով՝ որպես առաջնորդ, նրանց կօգնի ճիշտ որոշումներ կայացնելու հարցում, նրանց խորհուրդ կտա՝ մինչև վերջ գնալ իրենց որոշումների մեջ, կօգնի գնահատել իրենց գործողությունները:

Որպես ուսուցիչներ՝ մենք պետք է կենդանի օրինակ լինենք մեր ուսանողների համար: Քո ուսանողները պետք է կարողանան նայել քո կյանքի մեջ և տեսնել, թե ինչպես ես դու արդեն կիրառում այդ աստվածաշնչյան ճշմարտությունները քո կյանքում:

Ուսուցիչը ուսանողներին օգնելու մեծ պատասխանատվություն ունի այս աստվածաշնչյան ճշմարտությունները նրանց կյանքում կիրառելու հարցում: Ուսուցիչը պետք է ավելին անի, քան պարզապես ասի. «Հիմա դասն ավարտվեց: Գնացե՛ք և կիրառե՛ք սրանք ձեր կյանքում»: Շատ անգամ ուսուցիչը կարող է անհատական աշխատանք կատարել որևէ ուսանողի հետ՝ համոզված լինելու համար, որ նա հաջողությամբ կիրառում է տվյալ աստվածաշնչյան ճշմարտությունն իր կյանքում:

Կյանքի փոփոխության այս գործընթացը հեշտ չէ. «կախարդական փայտիկ» գոյություն չունի: Դա ժամանակ ու նվիրվածություն է պահանջում:
Դա ինքնադաստիարակություն է պահանջում: Դա նշանակում է, որ ուսանողները

պետք է պատրաստակամ լինեն՝ կուլ տալ իրենց հպարտությունը և տեսնել, թե ով են իրենք իրականում, և կատարեն գործողություններ՝ փոփոխելու այն ամենը, ինչի կարիքը կա:

5. Ուսուցչի դերը:

Ինչպե՞ս է այս փիլիսոփայությունն ազդելու այն մեթոդների ու նյութերի վրա, որոնք դու՝ որպես ուսուցիչ, գործածում ես դասարանում:

Քայլ 1. Տեղեկություն (ուսուցիչ):

Թե որքան տեղեկություն է ուսուցիչը տալիս իր ուսանողներին՝ ցույց է տալիս ուսուցչի ուսուցման իրական փիլիսոփայությունը: Եթե դու ողջ դասաժամը նվիրես քո ուսանողներին տեղեկություններ տալուն, դրանով իսկ ցույց կտաս, որ քո ուսուցման փիլիսոփայությունն ուսանողներին ընդամենը տեղեկություններ տալն է:

Սակայն եթե օգտագործես երեք քայլերից բաղկացած փիլիսոփայությունը՝ տեղեկություն, հասկացողություն և գործողություն, դու դասաժամի միայն մի մասը կանցկացնես տեղեկություն տալու համար և խիստ ընտրողաբար կմոտենաս, թե ինչ տեղեկություն ես տալիս քո ուսանողներին: Այդ տեղեկությունը քո ուսանողներին ոչ միայն կասի, թե ինչ են նրանք ուսումնասիրելու, այլ նաև՝ թե ինչու և ինչպես այդ տեղեկությունը կարող է գործածվել նրանց կյանքում:

Որպես ուսուցիչ՝ դու կարող ես ներկայացնել այն տեղեկությունները, որոնք քո կարծիքով ամենաօգտակարն են եղել այդ ուսուցումները հենց քո կյանքում կիրառելիս:

Եթե ուսուցման քո փիլիսոփայությունը ներառում է բոլոր երեք բաժինները, ապա երրորդ քայլի (գործողություն) տեսակետից տեղեկություն տալու քո մեթոդները այնպես կծրագրես, որպեսզի ավելի շատ լինես ուղղորդող, քան թե վերջնական հեղինակություն բոլոր պատասխանների համար: Ավելի արդյունավետ ու գործնական է՝ ուղղորդել ուսանողներին, որպեսզի իրենք գտնեն իրենց պետք եղած տեղեկությունը, քան թե ողջ տեղեկությունը հաղորդել նրանց: Այս ձևով ուսանողներն ակտիվորեն կներգրավվեն տեղեկություններ հավաքելու հարցում, որոնց կարիքն ունեն այս ուսուցումներն իրենց առօրյա կյանքում կիրառելու համար:

Ուսուցիչը կօգնի ուսանողներին, որ սովորեն, թե ինչպես ինքնուրույն տեղեկություն գտնեն՝ շեշտելով Աստվածաշունչը՝ որպես տեղեկության հիմնական աղբյուր, օգտագործելու կարևորությունը:

Ուսուցիչը պետք է շեշտի, որ տեղեկություն հավաքելն ուսուցման (կամ կյանքի)** նպատակը չէ: Տեղեկություն հավաքելը պարզապես մի գործիք է, որպեսզի կատարենք 2-րդ և 3-րդ քայլերը և գործի դնենք այս ուսուցումները մեր առօրյա կյանքում:

Քայլ 2. Հասկացողություն (ուսուցիչ):

Եթե քո փիլիսոփայությունը ներառում է այս քայլը՝ հասկացողություն, դու ժամանակ կհատկացնես դասարանում պարզելու, թե արդյո՞ք քո ուսանողները պարզորոշ հասկանում են քո սովորեցրած փաստերը: Դու նաև ժամանակ կհատկացնես քո ուսանողներին օգնելու համար, որպեսզի գտնեն ճանապարհներ, թե ինչպես այս ուսուցումները կապեն իրենց առօրյա կյանքի հետ:

Ինչպե՞ս դու կարող ես պարզել, թե քո ուսանողներն իրո՞ք հասկանում են այն, ինչը դու սովորեցնում ես: Ժամանա՛կ հատկացրու իրենց սովորած փաստերը և մտքերը դասարանում քննակելու համար: Մեր փիլիսոփայության այս քայլն իրականացնելու լավագույն մեթոդներից մեկը հարցեր տալն է (թույլ տալով, որ ուսանողները պատասխանեն դրանց): Սկսի՛ր պարզ հարցերից և շարունակի՛ր ավելի բարդ հարցերով, որոնք ստիպում են մտածել: Փակ վերջավորությամբ հարցերի փոխարեն օգտագործի՛ր բաց վերջավորությամբ հարցեր:
Բաց վերջավորությամբ հարցերը բացատրական պատասխան պահանջող հարցերն են: Փակ վերջավորությամբ հարցերն ընդամենը «այո» կամ «ոչ» պատասխանի կարիք ունեն:

Առանցքային հարցը, որին ուսանողները պետք է պատասխանեն, սա է.

«Ինչո՞ւ ես պետք է այս բանն անեմ…»

Ուսուցիչը պետք է նրանց ուղղորդի բացահայտելուն, թե ինչո՛ւ են այդ փաստերը կարևոր իրենց առօրյա կյանքի համար:

Ուսուցիչը պետք է «Ինչո՞ւ»-ից առաջ անցնի և օգնի ուսանողներին հասկանալու, թե ինչպես կիրառեն այս ուսուցումներն իրենց ամենօրյա կյանքում: Ընդհանրական հայտարարությունները և կրոնական սովորություններն այս հարցում ոչ մի օգուտ չեն տա: Ուսուցիչը պետք է ուսանողին օգնի՝ գտնել կոնկրետ ու պարզ քայլերով գործողություններ, որոնք ուսանողին ցույց կտան, թե ինչպես այս ուսուցումները կիրառի իր կյանքում այսօր:

Ուսուցիչը պետք է զգայուն լինի ուսանողների կարիքների հանդեպ: Ուսանողների կարիքների այս իմացությունը քեզ կօգնի, որ ուղղորդես նրանց՝ հստակ հասկանալ այն տեղեկությունը, որը նրանք սովորել են: Դու պետք է նաև գիտակցես քո սահմանափակումներն այս հարցում և վստահես Սուրբ Հոգուն, որպեսզի Նա յուրաքանչյուր ուսանողի հայտնի, թե որն է նրա իրական կարիքը,

և թե ինչպես նա կարող է տվյալ տեղեկությունը կապել իր կյանքի հետ և կիրառել այն իր առօրյայում:

Ուսուցանելիս դու չպետք է կանգ առնես այստեղ՝ միայն նրանց օգնելու համար, որ հասկանան, թե ինչ ես դու ուսուցանում: Այս քայլն ընդամենը նախապատրաստում է ուսանողներին բարձրանալ մեկ քայլ վերև (որն ամենակարևորն է)՝ անձնական կիրառություն:

Քայլ 3. Գործողություն. Անձնական կիրառություն (ուսուցիչ):

Սա ողջ ուսումնական պրոցեսի ամենակարևոր քայլն է: Եթե ուսանողները չեն կարողանում անձամբ կիրառել այն, ինչ դու նրանց ուսուցանում ես, ուրեմն ինչ-որ իմաստով ուսուցումը ձախողվել է: Դու պետք է ուղղորդես ուսանողներին, որպեսզի այս ուսուցումները գործադրեն իրենց առօրյա կյանքում: Ուսանողները պետք է տեսությունից անցնեն գործնականի և առերեսվեն այսօրվա իրական կյանքի հետ: Դու կարող ես նաև ուսանողներին ուղղորդել, որ իրենք իրենց տան այս հարցը. «Ի՞նչ կարող եմ այսօր անել, որպեսզի այս ուսուցումները գործնականում կիրառեմ իմ կյանքում»:

Նայի՛ր Հիսուսի ուսուցման մեթոդներին: Սովորեցնելիս Նա մարդկանց միշտ ասում էր, որ ինչ-որ բան անեն: Գրեթե բոլոր դեպքերում դա կապ ուներ նրանց կյանքի հետ հենց այդ օրը: Երբ մարդիկ խնդիրներով գալիս էին Նրա մոտ, Նա երբեք նրանց չէր ասում, որ գնան և Աստվածաշունչ կարդան, կամ գնան և դրա համար աղոթեն: Նա միշտ նրանց ինչ-որ պարզ ու գործնական բան էր հանձնարարում, որ անեն:

Մենք՝ որպես ուսուցիչներ, պետք է այսօր նույնն անենք: Ուսուցումը հասցրո՛ւ պարզ, գործնական քայլերի մակարդակի, որոնք ուսանողներն այսօր կարող են անել: Դու պետք է դասարանում ժամանակ հատկացնես, որպեսզի ծրագրես, բացատրես և գնահատես սովորածը կիրառելու՝ ուսանողների փորձերի արդյունքները:

Դու կարող ես օգտագործել ստուգելու այս պարզ ձևը, որպեսզի կողմնորոշվես, թե ինչ սովորեցնես: Եթե քո ուսանողները չեն կարող անել այն, ինչը դու այսօր ուսուցանելու ես, ապա, ամենայն հավանականությամբ, դու չպետք է դա այսօր ուսուցանես: Սովորեցրո՛ւ միայն այն, ինչը նրանք կարող են անել այսօր: Սա գուցե կնշանակի, որ դու շատ տեղեկություններ չես փոխանցի նրանց: Շատ լավ է: Դա նորմալ է: Քո ուսանողներն աճում են կատարելով: Նրանք միշտ էլ կարող են շատ տեղեկություններ գտնել: Նրանց մղիր գործողությո՛ւն անելու. գործածելու այն տեղեկությունը, որը դու նրանց տալիս ես:

Դու քո ուսանողներին միշտ պետք է մղես գործողության: Դու չես կարող դա անել ուսանողների փոխարեն: Լավագույն բանը, որ դու կարող ես անել նրանց համար, կենդանի օրինակ ծառայելն է այն ամենի, ինչը դու ուսուցանում ես:

6. Ուսանողի դերը:

Ուսուցման այս փիլիսոփայությունը պետք է սովորեցնել նաև ուսանողներին: Նրանք պետք է հասկանան, թե ինչ կապ ունի այս փիլիսոփայությունն իրենց հետ դասարանում և ինչպես դա կազդի նրանց սովորելու վրա: Նրանք պետք է հասկանան, թե այդ փիլիսոփայությունն ինչպես կազդի նրանց կյանքի վրա նաև դասասենյակից դուրս:

Քայլ 1. Տեղեկություն (ուսանող):

Սովորելու այս հատվածում նայելով ուսանողի դերին՝ ես կարծում եմ, որ ուսանողի համար օգտակար կլիներ երկու հարց տալ.

1. Ի՞նչ տեղեկություն ես պետք է ստանամ ուսուցչից:
2. Ի՞նչ տեղեկություն ես (ուսանողը) կարող եմ ինքնուրույն գտնել:

Ուսանողները պետք է բավականաչափ տեղեկություն ունենան, որպեսզի կարողանան հստակ պատկերացում կազմել այն թեմայի վերաբերյալ, որն անցնում են: Հիմնականը, որը կարիք կա արագ անցնելու, սահմանումն է:

Ուսանողները պետք է ի վիճակի լինեն բառացի արտահայտել այն, ինչի մասին խոսվել է: Օրինակ, եթե դու դասավանդելու ես «Հավատ» թեման, ուսանողները պետք է կարողանան հստակ սահմանել, թե ինչ է «Հավատը»: Նրանք պետք է տեսնեն, թե ինչպես կարող է հավատը երևալ և գործադրվել այսօր իրենց առօրյա կյանքում: Սա պետք է ավելին լինի, քան բառարանային սահմանումը: Նրանք կարիք ունեն կյանքից վերցրած պատկերավոր սահմանման, որն ամբողջությամբ կներկայացնի սահմանվող սուբյեկտի էական իմաստը:

Ուսանողները պետք է իմանան, որ տեղեկություն հավաքելը սովորելու կամ ուսուցման համար նպատակ չէ: Նրանք կրթված չեն համարվում, եթե միայն ինչ-որ չափով փաստերի մասին տեղեկացված են, այլ՝ կրթված են այն ժամանակ, երբ կարողանում են այդ փաստերը կիրառել իրենց ամենօրյա ապրելակերպի մեջ: Այսպիսով, տեղեկությունը, որը նրանք ստանում են, պետք է նրանց տանի մեր փիլիսոփայության հաջորդ երկու՝ հասկացողություն և գործողություն, քայլերին:

Ուսանողները պետք է սովորեն, թե ինչպես կարելի է ինքնուրույն ավելի շատ տեղեկություն հայթայթել դասարանում իրենց սովորածի վերաբերյալ: Նրանք պետք է սովորեն, թե ինչպես տեղեկություն ստանալ Աստվածաշնչից, ինչպես

օգտվել համաբարբառից, ուրիշ գրքերից, նաև՝ ինչպես պատշաճ տեղեկություն վերցնել իրենց առօրյա անձնական փորձառությունից: Շատ անգամ ամենաիմաստալից տեղեկությունը (ուսանողների համար) նրանք կարող են ստանալ իրենց պարզ առօրյա կյանքից: Ուսանողները սովորաբար մեծ հետաքրքրություն են դրսևորում այն տեղեկության հանդեպ, որը նրանց կօգնի հասկանալ, թե ինչ է տեղի ունենում նրանց կյանքում այսօր՝ այս պահին:

Ուսանողների ստացած տեղեկությունը նրանց պետք է մղի իրենց առօրյա կյանքում դա օգտագործելուն. «ինչպե՞ս անել»: Օրինակ, ինչպե՞ս օգտագործել հավատը, կամ ինչպե՞ս հաղթահարել տվյալ փորձությունը:

Քայլ 2. Հասկացողություն (ուսանող):

Ուսանողներին պետք է քաջալերել, որ մտածեն: Նրանք պետք է ավելին անեն, քան դասարանում նստելն ու տեղեկություն կուտակելը: Նրանք պետք է սկսեն գնահատել այդ տեղեկությունը: Հարցեր տան, քննարկեն: Պետք է սովորեն, թե ինչպես այդ տեղեկությունը կապել այն բանի հետ, ինչ տեղի է ունենում նրանց կյանքում այսօր:

Ուսանողները պետք է գիտակցեն իրենց պատասխանատվությունը՝ զգայուն լինել Սուրբ Հոգու առաջնորդությանը: Անհրաժեշտ է, որ նրանք թույլ տան Սուրբ Հոգուն, որպեսզի Նա ցույց տա նրանց կյանքում այն ասպարեզները, որտեղ կարող են կիրառել այդ տեղեկությունը:

Ուսանողները պետք է հստակ հասկացողություն ունենան, թե ինչպես կարող են կիրառել ուսուցումները: Նրանք պետք է հասկանան գործողության կոնկրետ քայլերը, որպեսզի կյանքի կոչեն այն, ինչ սովորում են: Պետք է սովորեն, թե ինչպես ամեն օր գործնական նպատակներ դնել: Նաև պետք է հասկանան, թե ուր կտանի նրանց այդ գործողությունը. «Ի՞նչ ձևով այս գործողությունը կփոխի իմ կյանքը»: Դասարանական քննարկումն այստեղ շատ օգտակար է:
Դա ուսանողներին հնարավորություն է տալիս բառացի ասելու, թե ինչպես են օգտագործելու տվյալ տեղեկությունը:

Մարկոս 4.24-ը ցույց է տալիս, թե ինչպես կարելի է ավելի խորը հասկանալ սովորածը: Հիսուսն ասաց. «Զգո՛ւյշ եղեք, որ գործադրեք՝ ինչ լսում եք: Որքան շատ դուք դա անեք, այնքան ավելի շատ կհասկանաք, թե ինչ եմ Ես ձեզ ասում» (The Living Bible. բառացի թարգմանություն):

Քայլ 3. Գործողություն (ուսանող):

Եթե ուսանողներն ընդունում ու օգտագործում են ուսուցման այս փիլիսոփայությունն իրենց կյանքում, պետք է ակտիվորեն մասնակցեն դասերին: Նրանք պետք է իրենց վրա վերցնեն սովորածը կիրառելու հիմնական պատասխանատվությունը:

Ի՞նչ տեսակ ներգրավվածություն պետք է ուսանողները ցուցաբերեն: Նրանք պետք է ավելին անեն, քան տեղեկություն կուտակելն ու անգիր անելը: Նրանք պետք է այդ տեղեկությունը կապեն իրենց ամենօրյա կյանքի հետ և գտնեն գործնական ձևեր՝ սովորածը կիրառելու համար: Նրանք պետք է այդ ուսուցումներն իրենց մտքերի, դրդապատճառների, զգացմունքների ու գործողությունների մաս դարձնեն: Այդ տեղեկությունները պետք է դառնան նրանց կյանքի մի մասը: Նրանք պետք է ապրեն դրանով: Սա է իրական փոփոխության ու իրական աճի բանալին:

Երրորդ՝ «Գործողություն» քայլի հաջողությունը կախված է Աստծո հետ ունեցած ուսանողների փոխհարաբերությունից: Միակ ձևը, թե ինչպես նրանք կարող են իրոք հաջողությամբ իրականացնել հարկ եղած փոփոխություններն իրենց կյանքում, թույլ տալն է, որ Աստված օգնի իրենց: Եթե նրանք այդ ամենը փորձեն անել իրենց սեփական ուժերով, կձախողվեն: Սակայն եթե նրանք թույլ տան, որ Հիսուս Քրիստոսը դառնա իրենց կյանքի Առաջնորդը, Աստված նրանց կօգնի հաջողությամբ իրականացնել հարկ եղած փոփոխությունները, որպեսզի նրանք կարողանան «կատարյալ և ամբողջական լինել և ոչ մի բանի պակասություն չունենալ» (Հակոբոս 1.4):

7. Առաջարկություններ առ այն, թե որտեղից սկսել օգտագործել Սովորեցնելու-սովորելու գործընթացը:

1. Աշխատի՛ր այս փիլիսոփայությունը գործածել քո առօրյա կյանքում՝ օգտագործելով հետևյալ հարցը. «Աստվա՛ծ իմ, ի՞նչ ես Դու ուզում, որ ես այսօր անեմ, որպեսզի իմ առօրյա կյանքում օգտագործեմ այն, ինչ սովորեցնում են»:
2. Նոր տեղեկություններ փոխանցելը սահմանափակի՛ր՝ դասավանդելով միայն մեկ թեմա: Ունեցի՛ր հետևյալ նպատակը. մեկ համար լավ ասել այսօրվա դասի ընթացքում:
3. Ընտրի՛ր մեկ հիմնական համար Սուրբ Գրքից, որպեսզի օգտագործես և կենտրոնանաս այն թեմայի վրա, որը դու այսօր դասավանդում ես:
4. Յուրաքանչյուր դասաժամի համար դի՛ր ամենօրյա նպատակներ:
   ա. Ի՞նչ ես ցանկանում, որ քո ուսանողներն իմանան և ի վիճակի լինեն իրենց բառերով բացատրել դասաժամի վերջում:
   բ. Ի՞նչ ես ուզում, որ քո ուսանողներն ի վիճակի լինեն անել այսօր (անձնապես կիրառել)՝ այս դասաժամից հետո:
5. Ծրագրի՛ր նրանց հանձնարարությունները՝ որպես անձնական կիրառության նախագծեր, որտեղ նրանք այսօր կարող են օգտագործել այն, ինչ հենց այսօր էլ սովորել են:
6. Նոր տեղեկություն փոխանցելու համար օգտագործի՛ր դասաժամի միայն մի մասը (մոտ ½-ը): Դասաժամի մնացած մասն օգտագործի՛ր՝ օգնելով ուսանողներին, որ հասկանան և քննարկեն, թե ինչպես կարող են այսօր անել այն, ինչ հենց այսօր էլ սովորել են:
7. Դասարանում ժամանա՛կ հատկացրու, որպեսզի քննարկեք, թե ինչպես են նրանք իրենց առօրյա կյանքում օգտագործել այն, ինչ երեկ էին սովորել:
8. Քո անձնական աստվածաշնչյան ուսումնասիրությունը համապատասխանեցրո՛ւ այն թեմայի հետ, որը դու դասավանդում ես այսօր:
9. Պարզ նպատակնե՛ր դիր քեզ համար, որպեսզի դրանք այսօր իրագործես այն թեմայի համապատասխան, որն այսօր անելու համար սովորեցնում ես քո ուսանողներին:
10. Կարդա՛ Lawrence Richards-ի Creative Bible Teaching (Moody Press) գիրքը: Այս գիրքը պարունակում է ուսուցման քրիստոնեական փիլիսոփայության հիանալի խորը քննարկում: Սույն գլխում շատ մտքեր վերցրած են այս գրքից:

* Այս տասը կետերը ըստ իրենց կարևորության չեն շարադրված: Սկզբում անցկացրո՛ւ այն կետերը, որոնք ամենահեշտը կլինեն քեզ համար:

Բաժին 3.

Օգնություն՝ «Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար» շարքն ուսուցանելու համար

Մաս 1. Ուսուցչի նյութեր

1. Ուսուցչի ձեռնարկ: 32
2. www.iTeenChallenge.org 32
3. Դասարանական մասնակցության գրանցում: 32
4. Ուսանողի ստուգարքի գրանցում: 33
5. ԽՈՒՆՔՀ-ի դասերին կիրառվող նյութերի օգտագործման քաղաքականությունը: 33

Մաս 2. Ուսանողի նյութեր

1. Ուսանողի ձեռնարկ: 34
2. Ուսուցման ուղեցույց: 34
3. Դասարանական հանձնարարության ցուցակ: 34
4. Ուսանողի ստուգարք և Դասընթացի վկայական: 35
5. Ավարտական քննություններ: 35
6. Աստվածաշնչի թարգմանություններ՝ քո դասարանում օգտագործելու համար: 36
7. Ուսանողի Ավարտական վկայական: 36

Մաս 1. Ուսուցչի նյութեր

1. Ուսուցչի ձեռնարկ:

Յուրաքանչյուր դասընթացի համար կա մեկ Ուսուցչի ձեռնարկ: Դրանք պարունակում են ամենօրյա դասի ծրագրեր ուսուցչի համար:

Ստուգարքն ու պատասխանները նույնպես ներառված են Ուսուցչի ձեռնարկի մեջ, ինչպես նաև՝ դասընթացի վկայականի նմուշը, որը պետք է տրվի տվյալ դասընթացը հաջողությամբ ավարտած յուրաքանչյուր ուսանողի:

2. www.iTeenChallenge.org

www.iTeenChallenge.org կայքը տարբեր նյութեր է առաջարկում ուսուցիչներին և ուսանողներին: Անձնակազմի Պատրաստում (Staff Training) բաժնում դու կարող ես գտնել ուսուցչի պատրաստման տարբեր դասընթացներ ԽՈՒՆՔՀ-ի նյութերը դասավանդելու համար: Դրանք բոլորը հնարավոր է անվճար ներբեռնել: Այն ներառում է PowerPoint պրեզենտացիա, ուսուցչի նշումներ, նշումներ վերապատրաստվողների համար, վիդեո և mp3 ֆայլեր:

Հենց այս նույն կայքում դու կարող ես ԽՈՒՆՔՀ-ի ուսումնական ծրագիրը ներբեռնել ուրիշ լեզուներով: Եթե դու այդ նյութերը քո ուզած լեզվով չես գտնում, խնդրում եմ, կապվի՛ր Գլոբալ Թին Չելենջի (Global Teen Challenge) հետ (հասցեն կայքի վերևում է), որպեսզի տեղեկանաս՝ գուցե քո ուզած տարբերակը ներկայումս թարգմանվում է:

Կարող եք մտածել ձեր ուսանողների առաջադիմությանը հետևելու համար հետևյալ ռեսուրսներն օգտագործելու մասին:

3. Դասարանական մասնակցության գրանցում:

Այս ձևը նախատեսված է նրանց համար, ովքեր սույն դասերն անցկացնում են շաբաթը հինգ օր: Բայց և այնպես, եթե քո դասացուցակը տարբեր է, շատ հեշտ է պարզապես այլ ամսաթվեր գրել դրա մեջ: «Նյութեր» բաժինը քեզ համար է, որպեսզի ստուգես, որ նրանք դասարան բերեն իրենց Աստվածաշունչը, տետրը և գրիչը կամ մատիտը:

«Դասարանական մասնակցության գրանցման» նմուշը կարող ես տեսնել 38-րդ և 39-րդ էջերում:

Մեկնաբանությունների և գնահատականների բաժինը ևս քեզ համար է, որպեսզի գրանցես նրանց առաջընթացը Ուսուցման ուղեցույցի նախագծերի և ստուգարքների մեջ:

4. Ուսանողի ստուգարքի գրանցում:

Այս ձևն ուսուցչին օգնելու համար է, որպեսզի հետևի ուսանողի առաջադիմությանը ԽՈՒՆՔՀ-ի 14 դասընթացներին: Երբ յուրաքանչյուր դասընթացի վերջում ստուգարքները գնահատելու լինես, ուսանողի միավորը գրի՛ր նրա՝ «Ուսանողի ստուգարքի գրանցում» թերթում:

Նմուշները տե՛ս 42-րդ և 43-րդ էջերում:

5. ԽՈՒՆՔՀ-ի դասերին կիրառվող նյութերի օգտագործման քաղաքականությունը:

ԱՄՆ-ի Թին Չելենջին են պատկանում ԽՈՒՆՔՀ-ի բոլոր ուսանողական և ուսուցողական նյութերը: Դուք իրավունք ունեք տպել ԽՈՒՆՔՀ-ի ուսուցման ծրագիրը, եթե օգտագործում եք ոչ վաճառքի համար: ԱՄՆ-ում դուք պետք է ԱՄՆ-ի Թին Չելենջից թույլտվություն ունենաք Ուսուցչի ձեռնարկները, Ուսանողի ձեռնարկները, Ուսուցման ուղեցույցները և ստուգարքներն անգլերենով տպելու համար:

Եթե ուզում եք վաճառել ԽՈՒՆՔՀ-ի դասընթացները որևէ այլ լեզվով, դուք պետք է գրավոր դիմեք ԱՄՆ-ի Թին Չելենջին կամ Գլոբալ Թին Չելենջին: Հետադարձ կապի հասցեն այս գրքի սկզբում է:

Գրանցման երեք ձևերը (վերը նշված), որոնք օգտագործվում են ԽՈՒՆՔՀ-ի դասերի հետ, կարող են վերարտադրվել ձեր ծառայությունում օգտագործելու համար: Նմուշները ներառված են այս գրքի վերջում:

Դասարանական հանձնարարության ցուցակ

Դասարանական մասնակցության գրանցում

Ուսանողի ստուգարքի գրանցում

Մաս 2. Ուսանողի նյութեր

1. Ուսանողի ձեռնարկ

Ուսանողի ձեռնարկը հիմնական պատկերացում է տալիս դասընթացի բովանդակության մասին: Դրանց առաջնային նպատակը ուսանողներին դասընթացի բովանդակության վերաբերյալ նշումներ փոխանցելն է, որը հենց սկզբից նախապատրաստում է դասընթացի վերջում անցկացվող ստուգարքի համար: Մենք նաև հույս ունենք, որ ուսանողները կշարունակեն դիմել այդ նշումներին նաև գալիք շաբաթների և տարիների ընթացքում, երբ իրենց կյանքում հանդիպեն նմանատիպ իրավիճակների:

Մենք շատ կցանկանայինք, որ դու յուրաքանչյուր ուսանողի տայիր մեկական Ուսանողի ձեռնարկ, որպեսզի մշտապես պահեն իրենց մոտ: Շատ ավարտածներ կիսվել են իրենց վկայություններով, թե ինչպես են Թին Չելենջն ավարտելուց հետո այդ նյութերն օգտագործել իրենց ընտանիքում կամ եկեղեցում ծառայելիս: Դա մի հրաշալի ներդրում է յուրաքանչյուր ուսանողի ներկա և ապագա կյանքում:

2. Ուսուցման ուղեցույց (տնային աշխատանքի հանձնարարություններ):

Ուսուցման ուղեցույցի շատ նախագծեր ծրագրված են ուսանողներին դասարանից դուրս աշխատանք հանձնարարելու համար: Մենք նաև հույս ունենք, որ սա նրանց կնախապատրաստի հաջորդ դասընթացի քննարկման համար:

Որոշ նախագծեր ուսանողներին օգնում են ավելի խորը դիտարկել դասարանում քննարկվող թեմաները: Այդ հանձնարարություններից շատերի նպատակն ուսանողներին օգնելն է, որպեսզի նրանք բացահայտեն, թե ինչպես կարող են այս աստվածաշնչյան ճշմարտությունները կիրառել իրենց առօրյա կյանքում:

3. Դասարանական հանձնարարության ցուցակ:

ԽՈՒՆՔՀ-ի յուրաքանչյուր դասընթացի Ուսուցման ուղեցույցի վերջում կա *Դասարանական հանձնարարության ցուցակի* դատարկ բլանկ: Այդ բլանկն օգնում է ուսանողներին հաշվետու վիճակում պահել, որպեսզի նրանց դասարանական աշխատանքը տվյալ օրվա համար պատրաստ լինի:

Յուրաքանչյուր Ուսուցչի ձեռնարկում՝ ուսուցչի դասի ծրագրերի առջևի մասում կա *Դասարանական հանձնարարության ցուցակի* դատարկ օրինակ:

Այդ օրինակն առաջարկում է ամսաթվեր, թե երբ պետք է կատարվեն հանձնարարությունները:

Թող ուսանողները «օր 1-ին», «օր 3-րդ» և այլնի փոխարեն գրեն իրական ամսաթվերը:

Դրանց նմուշները տե՛ս այս գրքի 40-րդ և 41-րդ էջերում:

4. Ուսանողի ստուգարք և Դասընթացի վկայական:

ԽՈՒՆՔՀ-ի յուրաքանչյուր դասընթաց ստուգարք ունի: Ստուգարքները նախատեսված են ինչ-որ ձևով բացահայտելու ուսանողների առաջադիմությունը աստվածաշնչյան ճշմարտությունները հասկանալու մեջ, որոնք յուրաքանչյուր դասընթացի ժամանակ քննարկվում են:

Պատասխանները գտնվում են Ուսուցչի ձեռնարկի վերջում:

Այն բանից հետո, երբ ուսանողն ավարտում է ստուգարքն ու դասընթացի հետ կապված մյուս բոլոր աշխատանքները, տրվում է նաև Վկայական, որը պետք է շնորհվի ուսանողին: Դասընթացի Վկայականի նմուշը գտնվում է Ուսուցչի ձեռնարկի վերջում:

5. Ավարտական քննություններ:

ԽՈՒՆՔՀ-ի 14 դասընթացներն ավարտելուց հետո ուսանողները պետք է նախապատրաստվեն ԽՈՒՆՔՀ-ի ողջ շարքի ավարտական քննության համար: ԽՈՒՆՔՀ-ում հասանելի են քննության երկու տարբերակներ: Ուսանողն այս քննությունը պետք է հանձնի բոլոր 14 դասընթացները հաջողությամբ ավարտելուց մոտ մեկ շաբաթ հետո:

Ավարտական քննություն 1-ինը նախատեսված է ընթերցանության միջինից ցածր մակարդակ ունեցող ուսանողների համար: Քննությունը պարունակում է *ճիշտ-սխալ, բազմակի պատասխաններով* և *համադրելու հարցեր:* Դրա ֆորմատը (<u>ձևաչափը</u>) նման է ԽՈՒՆՔՀ-ի 14 դասընթացների ստուգարքներին: Ուսանողներն իրենց պատասխանները գրում են քննաթերթիկի վրա:

Ավարտական քննություն 1-ինի նմուշի համար տե՛ս 45-49-րդ էջերը: *Ավարտական քննություն 1-ինի Պատասխանները* զետեղված են այս գրքի 51-րդ էջում:

Ավարտական քննություն 2-րդը նախատեսված է ընթերցանության միջինից բարձր մակարդակ ունեցող ուսանողների համար: Քննությունն ամբողջությամբ կարճ շարադրանքով հարցեր են: Այս քննաթեթիկը բազմակի օգտագործման

համար է. ուսանողների բոլոր պատասխանները գրվում են առանձին դատարկ թղթի վրա:

Ավարտական քննություն 2-րդի նմուշի համար տե՛ս 53-56-րդ էջերը: Այս քննության *Պատասխանները* զետեղված են սույն գրքի 57-րդ էջում:

«Ուսումնական ուղեցույց ԽՈՒՆՔՀ-ի ավարտական քննության համար» բաժինը տեղեկատվական թերթիկ է, որն ուսանողներին բացատրում է, թե ինչպես նախապատրաստվել Ավարտական քննության համար:

Դրա նմուշի համար տե՛ս սույն գրքի 44-րդ էջը: Դու ազատ կարող ես դա պատճենահանել քո ուսանողների համար:

6. Աստվածաշնչի թարգմանություններ՝ քո դասարանում օգտագործելու համար:

Մենք շատ կցանկանայինք, որ դու Աստվածաշնչի այնպիսի թարգմանություն օգտագործես, որը հեշտ ու հասկանալի կլինի քո ուսանողների համար, երբ նրանք մասնակցեն ԽՈՒՆՔՀ-ի դասերին:

7. Ուսանողի Ավարտական վկայական:

Խրախուսանքը ցանկացած ուսումնական ծրագրի կարևոր մասն է կազմում: ԽՈՒՆՔՀ-ի՝ ուսանողի *Ավարտական վկայականն* այդպիսի գործիք է՝ ստեղծված վերոնշյալ նպատակի համար: ԽՈՒՆՔՀ-ի բոլոր 14 դասընթացներն ավարտելուց հետո ուսանողը պետք է նախապատրաստվի ավարտական քննության: Ավարտական քննությունները բարեհաջող հանձնած յուրաքանչյուր ուսանողի պետք է պարգևատրել *Ավարտական վկայականով*:

Վկայականի նմուշը գտնվում է 71-րդ էջում:

Բաժին 4.

Նմուշների ձևեր, աշխատանքային թերթիկներ և ավարտական քննություններ «Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար» շարքի համար:

1. Դասարանական մասնակցության գրանցում

Նմուշ.....38

Բլանկ.....39

2. Դասարանական հանձնարարության ցուցակ

Նմուշ.....40

Բլանկ.....41

3. Ուսանողի ստուգարքի գրանցում

Նմուշ.....42

Բլանկ.....43

4. Ուսումնական ուղեցույց՝ ավարտական քննության համար.....44

5. Ավարտական քննություն 1-ին.....45

6. Ավարտական քննություններ 1-ին: Պատասխաններ.....51

7. Ավարտական քննություն 2-րդ.....53

8. Ավարտական քննություններ 2-րդ: Պատասխաններ.....57

9. Ուսանողի Ավարտական վկայական.....71

Դասարանական մասնակցության գրանցում

Դասընթացի անվանումը. Հաջողակ քրիստոնեական կենսակերպ Ժամանակ. 10:00 Շաբաթվա օրեր. 6/8 – 6/12-2015

Ուսանող	Մասնակցություն և պարտաճանաչություն					Նյութեր					Մեկնաբանություններ և գնահատականներ								
	Ե	Ե	Չ	Հ	Ու	Ե	Ե	Չ	Հ	Ու	ԵՐԿ.	ԵՐԵՔ.	ՉՈՐ.		ՀԻՆԳ.		ՈՒՐԲ.		
											Նախ. 1	Նախ. 2	Հարց/Նախ. 4		Հարց/Նախ. 5,6		Նախ.3/Ստ.		
Դեյվ Ռ.	P	P	P	P	P						Հանձնած	C	A	C	A	C	C	95	
Ջոու Պ.	P	P	P	A	P						Չհանձնած	C	B	C	A	C	C	87	
Թիմ Ս.	P	L	P	P	P						C	C	Inc.	C	C	C	Inc.	76	
Լուիս Ա.	P	A	P	P	P						C	C	A	C	B	C	C	89	

Դասարանական մասնակցության գրանցում (մատյան)

Դասընթացի անվանումը. **Ժամանակ.** **Շաբաթվա օր.**

Ուսանող	Մասնակցություն և պարտաճանաչություն					Նյութեր					Մեկնաբանություններ և գնահատականներ				
	Ե	Ե	Չ	Հ	Ու	Ե	Ե	Չ	Հ	Ու	ԵՐԿ.	ԵՐԵՔ.	ՉՈՐ.	ՀԻՆԳ.	ՈՒՐԲ.

Դասարանական հանձնարարության ցուցակ

Դասընթացի անվանումը. Հոգևոր զորությունը և գերբնականը

Հարցաշարեր	**Անգիր համարներ**	**Ամսաթիվ**
1.	Բ Պետրոս 1.3	օր 2.
2.	Հակոբոս 1.2-4	օր 3.

Նախագծեր

	Ամսաթիվ
1.	օր 1.
2.	օր 2.
3.	օր 3. կամ այլընտրանքային
4.	օր 2.
5.	օր 3.
6.	օր 4.

Ստուգարք օր 5.

Դասարանական հանձնարարության ցուցակ

Դասընթացի անվանումը _____

Հարցաշարեր Անգիր համարներ Ամսաթիվ

1. _____ _____
2. _____ _____
3. _____ _____

Նախագծեր Ամսաթիվ

1. _____
2. _____
3. _____
4. _____
5. _____
6. _____

Ստուգարք Ամսաթիվ_____

*Սրանք գտնվում են յուրաքանչյուր *Ուսուցման ուղեցույցի* վերջում:

Ուսանողի ստուգարքի գրանցում

Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար

*Դասընթացներն ավարտված են Ուսանողի անունը Խ. Արմեն

ԻԿԻՃՔ Փորձ ՔՊ ԲԱԻ ԱՓՄՀ

ԹՀԱ ՀՔԿ Հ Աստծուն ԻՈՒԱ ՀԶԳ

Վերա ԱԶՄ Հ մարդուն ՍԻ

Ամսաթիվ	Դասընթացի անվանումը	Ստուգարքի գնահատական
4-3-20xx	Ինչպե՞ս կարող եմ իմանալ, որ ճշմարիտ քրիստոնյա եմ	98
4-10-20xx	Թռուցիկ հայացք Աստվածաշնչին	89
4-17-20xx	Վերաբերմունքներ	96
4-24-20xx	Փորձություններ	99
5-1-20xx	Հաջողակ քրիստոնեական կենսակերպ	100
5-8-20xx	Աճել ձախողումների միջոցով	85
5-15-20xx	Քրիստոնեական պրակտիկա	92
5-22-20xx	Հնազանդություն Աստծուն	80
5-29-20xx	Հնազանդություն մարդուն	91
6-12-20xx	Բարկություն և անձնական իրավունքներ	97
6-19-20xx	Ինչպես ուսումնասիրել Աստվածաշունչը	95
6-26-20xx	Սեր և ինքնաընդունում	87
7-3-20xx	Անձնական փոխհարաբերություններ մարդկանց հետ	95
7-10-20xx	Հոգևոր զորությունը և գերբնականը	87
7-17-20xx	ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ	87

Ուսանողի ստուգարքի գրանցում

Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար

*Դասընթացներն ավարտված են Ուսանողի անունը _____

ԻԿԻՃՔ	Փորձ	ՔՊ	ԲԱԻ	ԱՓՄՀ
ԹՀԱ	ՀՁԳ	Հ Աստծուն	ԻՈՒԱ	ՀՁԳ
Վերա	ԱՁՄ	Հ մարդուն	ՍԻ	

Ամսաթիվ	Դասընթացի անվանումը	Ստուգարքի գնահատականը
	Ավարտական քննություն	

*Սա այլընտրանքային արագ հղման աղյուսակ է՝ ԽՈՒՆՔՀ-ի բոլոր դասընթացների համառոտագրություններով: Պարզապես շրջանի մեջ վերցրո՛ւ այն դասընթացը, որի ստուգարքն ուսանողը հանձնել է: Այնուհետև ճշգրիտ տեղեկությունը լրացրո՛ւ էջի մնացած հատվածի դատարկ տողերում:

Ուսուցման ուղեցույց *Ավարտական քննության* համար

Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար

1. Գրի՛ր այն դասընթացները, որոնք ներառված են ավարտական քննության մեջ:
2. Յուրաքանչյուր դասընթացի համար դասավորի՛ր քո բոլոր նշումներն ու թղթերը: Եթե դրանցից մի մասը պակաս է, ցուցա՛կ կազմիր և տո՛ւր ուսուցչիդ:
3. Ամեն օր վերանայի՛ր բովանդակության ցանկը *«Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար»* (ԽՈՒՆՔՀ) բաժնի բոլոր դասընթացների համար:
4. Արագ վերանայի՛ր բոլոր դասընթացների վերաբերյալ քո բոլոր նշումները, որպեսզի թարմացնես հիշողությունդ առ այն, թե ինչի մասին էր յուրաքանչյուր դասընթացը:
5. Ուշադիր անցի՛ր բոլոր դասընթացներով: Ամբողջական պատկերացո՛ւմ կազմիր յուրաքանչյուր դասընթացի հիմնական ուսուցման վերաբերյալ:
6. Յուրաքանչյուր դասից դո՛ւրս գրիր կարևոր բառերը: Հստակ իմացի՛ր, թե ինչ են դրանք նշանակում:

   Օրինակ. հավատ, ներշնչված սեր, վերաբերմունքներ, փորձություն, կրկնակի անկում, Սուրբ Հոգու մկրտություն:
7. Գրի՛ առ կարևոր փաստերը: Օրինակ. փաստեր, թե ինչպես ինչ-որ բան անել:

   Օրինակներ.
   Փաստեր, որոնք դու պետք է իմանաս ճշմարիտ քրիստոնյա դառնալու համար:
   Ինչպե՛ս հաղթահարել փորձությունները:
   Ինչպե՛ս արձագանքել, երբ քեզ ուղղում են (Վերաբերմունքներ):
   Ինչպե՛ս սեր ցույց տալ (Ա Կորնթացիներին, 13-րդ գլուխ):
   Ինչպե՛ս հավատ ունենալ:
   Ինչպե՛ս ինքդ քեզ ընդունել:
8. Գրի՛ առ կարևոր ցուցակները և ուսուցումները: Կարողացի՛ր բացատրել դրանցից յուրաքանչյուրը:

   Օրինակներ.
   Բացատրի՛ր ամուսնության երեք փուլերը:
   Բացատրի՛ր Աստվածաշնչի ուսումնասիրության հիմնական քայլերը:
   Ի՞նչ պետք է ես անեմ, երբ ինձ դրդում են, որ սխալ բան անեմ:
   Կարողացի՛ր թվարկել Նոր Կտակարանի գրքերի անունները:
9. Իմացի՛ր ԽՈՒՆՔՀ-ի դասընթացների 10 անգիր համարները:

Անուն _____ **Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար**

Ամսաթիվ _____ **Ավարտական քննություն 1-ին**

Սա ավարտական քննություն է *Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար* (5-րդ թողարկում) բաժնի 14 դասընթացների համար:

ՃԻՇՏ-ՍԽԱԼ ՀԱՐՑԵՐ (յուրաքանչյուրը 1 միավոր):

Ցուցումներ. Եթե պատասխանը ճիշտ է, գծիկի վրա դի՛ր X:

Եթե պատասխանը սխալ է, գծիկի վրա դի՛ր O:

1. _____Նախքան դու վստահ կլինես, որ ճշմարիտ քրիստոնյա ես, պետք է հասկանաս, թե ինչ է նշանակում՝ ճշմարիտ քրիստոնյա դառնալ:

2. _____Փրկությունը հիմնված է փաստերի վրա. Աստվածաշնչում գրանցված փաստերի:

3. _____Ճշմարիտ քրիստոնյա դառնալու համար դու Աստծո հանդեպ հավատ ունենալու կարիք չունես:

4. _____Ճշմարիտ քրիստոնյա լինելու առաջին նշաններից մեկն այն է, որ տվյալ մարդը չի ցանկանա մյուսների հետ կիսվել, թե ինչ է Քրիստոսն անում իր կյանքում:

5. _____Եթե Քրիստոսն է ղեկավարում քո կյանքը, այն կլինի լիառատ և ամբողջական:

6. _____Երբ դու դառնում ես ճշմարիտ քրիստոնյա, քո բոլոր խնդիրները հենց նույն օրը հօդս են ցնդում:

7. _____Հիսուսն ուզում է դառնալ քո լավագույն ընկերը:

8. _____Դու պետք է Հիսուսին խնդրես, որ ների քո մեղքերը, եթե ուզում ես դառնալ ճշմարիտ քրիստոնյա:

9. _____Նախքան հաղորդության մասնակցելը, պետք է նայես քո ներսը, թե արդյոք մեղք չե՞ս գործել:

10. _____Մարդը դառնում է ճշմարիտ քրիստոնյա միայն ջրով մկրտվելուց հետո:

11. _____Քո վկայությունը տալիս դու միշտ պետք է քարոզես:

12. _____Երբ ես վկայություն եմ տալիս, միշտ պետք է իմ կյանքից մի օրինակ բերեմ, թե ինչպես է Աստված ինձ օգնում աճել:

13. _____Փորձվելը մեղք չէ:

Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար
Ավարտական քննություն 1-ին, էջ 2

14. _____Տեղական եկեղեցու գոյության հիմնական նպատակը քրիստոնյաներին օգնելն է, որ ավելի ուժեղ դառնան:

15. _____Լավագույն ձևերից մեկը, որով քրիստոնյաները կարող են աճել, իրար հետ խոսելն է և իրենց հավատալիքներով, խնդիրներով ու հաջողություններով միմյանց հետ կիսվելը:

16. _____Աստված խոստացել է ներել քեզ, եթե դու անկեղծորեն խնդրես Նրան:

17. _____Եթե ես սխալվեմ, ոչ մի դեպքում չպետք է ընդունեմ, որ սխալ եմ:

18. _____Ես միշտ պետք է գտնեմ իմ սխալվելու պատճառը:

19. _____Իմ խնդիրների հիմնական պատճառն այն է, որ ես ամեն բան անում եմ իմ ձևով՝ փոխանակ Աստծո ձևով անելու:

20. _____Անապահովության զգացողությունը հիմնականում իմ արժեքները նյութական բաների մեջ դնելու հետևանք է:

21. _____Եթե դու շարունակ սխալվում ես, դա ցույց է տալիս, որ քո կյանքի այդ ասպարեզում ընդհանրապես չես աճում:

22. _____Եթե մարդը նորից է ընկնում թմրանյութի կախվածության մեջ, ապա սովորաբար դրա առաջին քայլը այն կրկին օգտագործելն է:

23. _____Հաջողակ քրիստոնյա դառնալու համար դու պետք է սովորես կառավարել քո զգացմունքները:

24. _____Հաջողակ քրիստոնյան երբեք սխալներ չի անում:

25. _____Աստված մարդու հետ խոսում է նրա խղճմտանքի միջոցով:

26. _____Բոլոր մարդիկ իրենց մեղավոր են զգում, երբ մեղք են գործում:

27. _____Դու պետք է Սուրբ Հոգով մկրտվես՝ հաջողակ քրիստոնյա լինելու և երկինք գնալու համար:

28. _____Եթե քեզ ասում են, որ ինչ-որ սխալ բան անես, ապա այդ դեպքում Աստված ուզում է, որ դու գտնես դա անելու մեկ այլ ձև, որպեսզի մեղք չգործես:

29. _____Եթե քեզ վրա իշխանություն ունեցող մեկն ասում է, որ մեղք գործես, դու պետք է դա անես, նույնիսկ եթե դա մեղք է:

30. _____Դու միշտ պետք է փորձես հասկանալ, թե քեզ վրա իշխանություն ունեցող մարդն ինչո՞ւ է քեզ ասում, որ ինչ-որ բան անես:

Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար
Ավարտական քննություն 1-ին, էջ 3

31. _____Աստված պատժում է քեզ, որովհետև ատում է քեզ, երբ մեղք ես գործում:

32. _____Դու միշտ պետք է պատրաստակամ լինես՝ հնազանդվելու քեզ վրա իշխանություն ունեցողներին:

33. _____Աստվածաշունչն ասում է, որ 18 տարեկան դառնալուց հետո դու պարտավոր չես հնազանդվել քո ծնողներին:

34. _____Աստված մեզ պատվիրել է, որ սիրենք նրանց, ովքեր մեզ վրա իշխանություն ունեն:

35. _____Եթե դու Աստծուն սիրես, ապա կսիրես միայն քրիստոնյաներին: Դու չես ենթարկվի նրանց, ովքեր մեղավորներ են:

36. _____Աստվածաշնչի մեծագույն օրենքը մեզ ասում է, որ սիրենք մեր դրացուն այնպես, ինչպես Աստված է սիրում մեզ:

37. _____Աստված սիրում է միայն քրիստոնյաներին:

38. _____Վերաբերմունքը քո մտածելակերպն է ինչ-որ բանի վերաբերյալ:

39. _____Քեզ համար ավելի կարևոր է՝ ցույց տալ Աստծո սերը մարդկանց հանդեպ, քան քո սերը՝ Աստծո հանդեպ:

40. _____Քրիստոնյաներն այսօր կարիք ունեն հնազանդվելու միայն Նոր Կտակարանի օրենքներին:

ԲԱԶՄԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՐՑԵՐ

Ընտրի՛ր ճիշտ պատասխանը և դրա տառը գրի՛ր գծիկի վրա (յուր. 2 միավոր):

1. _____Եթե մարդը կասկածներ ունի, թե արդյո՞ք ինքը ճշմարիտ քրիստոնյա է, նա պետք է.

   ա) մոռանա դրանց մասին,
   բ) հանձնի դրանք Աստծուն,
   գ) առաջ անցնի, կամ անտեսի դրանք:

2. _____Երբ երկրպագում ես Աստծուն, դու.

   ա) խնդրում ես Աստծուն, որ օգնի քեզ քո առօրյա կյանքում,
   բ) աղոթում ես, որ Աստված բուժի մի հիվանդ մարդու,
   գ) ասում ես Աստծուն, թե ինչն ես Նրա մեջ սիրում:

Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար
Ավարտական քննություն 1-ին, էջ 4

3. _____Սուրբ Հոգին.

ա) Հայր Աստվածն է,
բ) Հիսուսն է,
գ) հավասար է Հայր Աստծո և Որդի Աստծո հետ:

4. _____Երբ ես իմ ընտանիքի հետ կիսվում եմ, թե ինչ է Քրիստոսն արել իմ կյանքում, պետք է.

ա) միշտ վիճաբանեմ նրանց հետ,
բ) երբեմն վիճաբանեմ նրանց հետ,
գ) երբեք չվիճաբանեմ նրանց հետ:

5. _____Սուրբ Հոգին ուզում է քեզ առաջնորդել ողջ ճշմարտության մեջ.

ա) միայն ճշմարիտ քրիստոնյա դառնալուց առաջ,
բ) միայն ճշմարիտ քրիստոնյա դառնալուց հետո,
գ) միշտ:

6. _____Եթե քո առաջնորդը սխալ է գործում, դու պետք է.

ա) բողոքես ու վիճաբանես քո առաջնորդի հետ,
բ) աղոթես քո առաջնորդի համար,
գ) չինազանդվես քո առաջնորդին,
դ) նրա ղեկավարին ասես, թե ինչ սխալ է արել քո առաջնորդը:

7. _____Աստվածաշնչի ամենամեծ օրենքն ասում է.

ա) սիրի՛ր քո դրացուն:
բ) սիրի՛ր Աստծուն:
գ) սիրի՛ր քո ընկերներին:

8. _____Երբ մարդն Աստծո հանդեպ ըմբոստ վերաբերմունք է ունենում, ամենաշատը պետք է աշխատի զարգացնել.

ա) հարգալից վերաբերմունք,
բ) ծառայի վերաբերմունք,
գ) երախտագետ վերաբերմունք,
դ) հանդարտ վերաբերմունք:

Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար Ավարտական քննություն 1-ին, էջ 5

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼ

Ճիշտ տառը գրի՛ր դատարկ գծիկի վրա (յուր. 2 միավոր):

1. _____ Հաղորդություն
2. _____ Աստծո տնտես
3. _____ Վկայություն
4. _____ Ջրի մկրտություն
5. _____ Տեղական եկեղեցի
6. _____Աղոթք
7. _____ Հոգեբանական մաս
8. _____ Հոգեբանական մաս
9. _____ Ֆիզիկական մաս
10. _____ Ֆիզիկական մաս

Ա. Ես դա անում եմ մեկ անգամ՝ ցույց տալու համար, որ դարձել եմ ճշմարիտ քրիստոնյա:

Բ. Վերհիշելու համար Հիսուսին և սպասելու Նրա երկրորդ գալստյանը:

Գ. Աստված ուզում է, որ մենք Նրան տանք մեր եկամուտի 10%-ը:

Դ. Ցույց է տալիս, թե ինչ է Աստված անում քո առօրյա կյանքում:

Ե. Մարդկանց խումբ, որոնք միասին հավաքվում են քրիստոնեական շփման համար:

Զ. Տեսողություն

Է. Միտք

Ը. Խոսել Աստծո հետ

Թ. Զգացմունքներ

Ժ. Լսողություն

ԱՆԳԻՐ ՀԱՄԱՐՆԵՐ

Գրի՛ր թվով 10 համար, որոնք դու անգիր ես արել այս 14 դասընթացների ընթացքում (յուրաքանչյուր համարը՝ 3 միավոր):

Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար

Ավարտական քննություններ 1-ին: Պատասխաններ (5-րդ խմբագրում):

Էջ 1.

Ճիշտ-սխալ հարցեր
(յուր. 1 միավոր)

1. X ճիշտ
2. X ճիշտ
3. O սխալ
4. O սխալ
5. X ճիշտ
6. O սխալ
7. X ճիշտ
8. X ճիշտ
9. X ճիշտ
10. O սխալ
11. O սխալ
12. X ճիշտ
13. O սխալ

Էջ 2.

14. X ճիշտ
15. X ճիշտ
16. X ճիշտ
17. O սխալ
18. X ճիշտ
19. X ճիշտ
20. X ճիշտ
21. O սխալ
22. X ճիշտ
23. O սխալ
24. O սխալ
25. X ճիշտ
26. O սխալ
27. O սխալ
28. X ճիշտ
29. O սխալ
30. X ճիշտ

Էջ 3.

31. O սխալ
32. X ճիշտ
33. O սխալ
34. X ճիշտ
35. O սխալ
36. O սխալ
37. O սխալ
38. X ճիշտ
39. O սխալ

Բազմակի ընտրության հարցեր
(յուր. 2 միավոր)

1. Բ
2. Գ

Էջ 4.

3. Գ
4. Գ
5. Գ
6. Բ
7. Բ
8. Բ

Էջ 5.

Համապատասխանեցնել հարցերը
(յուր. 2 միավոր)

1. Բ
2. Գ
3. Դ
4. Ա
5. Ե
6. Ը
7. Է կամ Թ
8. Է կամ Թ
9. Զ կամ Ժ
10. Զ կամ Ժ

ԱՆԳԻՐ ՀԱՄԱՐՆԵՐ
10 անգիր համարներ
(3 միավոր
յուրաքանչյուրը)

Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար — Ավարտական քննություն 2.

Սա *«Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար»* (5-րդ խմբագրում) շարքի 14 դասընթացների ավարտական քննությունն է: Բոլոր պատասխանները գրի՛ր քեզ տրված առանձին թղթի վրա: Այս քննաթերթիկի վրա ոչ մի նշում մի՛ արա:

Փակագծերում եղած թիվը ցույց է տալիս, թե քանի միավոր արժե հարցը: Ընդհանուր քննությունն իր մեջ պարունակում է 400 միավոր (ճիշտ պատասխանների ընդհանուր թիվը բաժանի՛ր 4-ի՝ իմանալու համար քո միավորը 100%-ի չափանիշի հիման վրա):

1. (6) Ա. Քանի՞ գրքից է կազմված Աստվածաշունչը:
   Բ. Քանի՞ գրքից է կազմված Հին Կտակարանը:
   Գ. Քանի՞ գրքից է կազմված Նոր Կտակարանը:

2. (32) Գրի՛ր Նոր Կտակարանի գրքերի բաժանումներն ու անվանումները:

3. (12) Գրի՛ր 4 փաստարկներ, որոնք ապացուցում են Աստվածաշնչի ճշգրիտ (հուսալի, ճիշտ) լինելը:

4. (10) Բացատրի՛ր, թե ինչ է նշանակում՝ «Աստվածաշունչը ներշնչված է Աստծո կողմից»:

5. (6) Ա. Ի՞նչ լեզվով է գրվել Հին Կտակարանը:
   Բ. Ի՞նչ լեզվով է գրվել Նոր Կտակարանը:

6. (5) Ո՞րն է Աստվածաշնչի ամենակարևոր դեպքը:

7. (5) Ո՞րն է մարգարեության նպատակն Աստվածաշնչում:

8. (9) Ո՞ր երեք տեղերում կարող ես գտնել փաստարկներ, որ ճշմարիտ դու քրիստոնյա ես (3 մասից պատասխան):

9. (8) Գրի՛ր 4 փոփոխությունների օրինակներ, որոնք տեղի են ունենում մարդու կյանքում ճշմարիտ քրիստոնյա դառնալուց հետո:

10. (5) Ի՞նչ է նշանակում անձնական փոխհարաբերություն ունենալ Հիսուս Քրիստոսի հետ:

11. (4) Երբ մարդը կասկածներ է ունենում, իր՝ ճշմարիտ քրիստոնյա լինելու հարցում, ապա որտեղի՞ց են գալիս այդ կասկածները (գրի՛ր 2 պատասխան):

12. (4) Ո՞ր 4 խնդիրները կարող են պատճառ հանդիսանալ մարդու համար, որպեսզի կասկածներ ունենա, թե արդյո՞ք ինքը ճշմարիտ քրիստոնյա է:

Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար
Ավարտական քննություն 2, Էջ 2

13. (5) Ինչպե՞ս մարդը կարող է ազատվել ճշմարիտ քրիստոնյա լինելու կասկածներից:

14. (6) Հունարեն ո՞ր երեք բառերն են նշանակում «սեր»:
Ի՞նչ է դրանցից յուրաքանչյուրը նշանակում:

15. (4) Ի՞նչ <u>չպետք</u> է սիրի ճշմարիտ քրիստոնյան:

16. (10) Ա Կորնթացիներին 13-րդ գլխից դո՛ւրս գրիր սիրո 5 բնութագրիչներ:

17. (12) Որո՞նք են 3 արմատական խնդիրները, որոնք պատճառ են հանդիսանում մարդու մյուս բոլոր խնդիրների համար:

18. (12) Ինչպե՞ս կարող է մարդն ինքն իրեն ընդունել (գրի՛ր 3 տարբերակներ):

19. (15) Որո՞նք են ամուսնության երեք փուլերն ըստ Մատթեոս 19.5-ի:

20. (9) Որո՞նք են Աստվածաշնչի ուսումնասիրության 3 հիմնական քայլերը: Բացատրեք, թե ինչ է դրանցից յուրաքանչյուրը նշանակում. (9 միավոր. 1 միավոր՝ 3 քայլերից յուրաքանչյուրի համար, 2 միավոր՝ յուրաքանչյուր բացատրության համար, թե ինչ է քայլերից յուրաքանչյուրը նշանակում).

21. (4) Ինչո՞ւ է կարևոր համարներ անգիր անելը (գրի՛ր 2 պատճառ):

22. (4) Ո՞րն է Աստծո Խոսքն անգիր անելու և Աստծո Խոսքի վրա մտածելու տարբերությունը:

23. (4) Որտեղի՞ց է գալիս հավատը:

24. (4) Որտեղի՞ց է գալիս հավատալիքը:

25. (6) Որտեղի՞ց է մարդը հավատ ձեռք բերում:

26. (5) Որտեղի՞ց է մարդը հավատալիք ձեռք բերում:

27. (5) Ինչպե՞ս կարող ես իմանալ, որ հավատ ունես:

28. (6) Ինչի՞ համար ես դու հավատն օգտագործում:

29. (3) Ո՞ր 3 մասերից է մարդը բաղկացած:

30. (4) Ի՞նչ պետք է անի մարդը, եթե ձախողվել է (գրի՛ր 4 տարբերակներ):

31. (4) Ի՞նչ կապ ունեն իմ անձնական իրավունքներն իմ բարկության հետ:

32. (10) Որո՞նք են հաջողակ քրիստոնյա դառնալու 5 քայլերը:

33. (6) Ի՞նչ պետք է անի մարդը իր սխալ մտքերի հետ (փորձություններ):
Ինչպե՞ս կարող է մարդը հաղթահարել այդ խնդիրը:

Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար
Ավարտական քննություն 2, Էջ 3

34. (6) Որո՞նք են ամենօրյա լավ նպատակի երեք նշանները:

35. (4) Ո՞վ է Սուրբ Հոգին:

36. (6) Ի՞նչ է անում Սուրբ Հոգին այսօր (գրի՛ր 3 տարբերակներ):

37. (5) Ո՞րն է Սուրբ Հոգով մկրտվելու նպատակը:

38. (6) Ինչո՞ւ ենք մենք հաղորդություն անում (գրի՛ր 3 պատճառներ):

39. (6) Ինչո՞ւ պետք է քրիստոնյան ջրով մկրտվի:

40. (5) Ինչպե՞ս կարող է հավատացյալը լինել Աստծո տնտես:

41. (4) Ո՞րն է տեղական եկեղեցու նպատակը:

42. (4) Որո՞նք են Աստվածաշնչի 2 ամենամեծ օրենքները:

43. (4) Ինչո՞ւ է մարդը բարկանում:

44. (4) Ինչպե՞ս կարող է հավատացյալն Աստծուն ցույց տալ, որ սիրում է Նրան (գրի՛ր 2 տարբերակներ):

45. (5) Ինչո՞ւ պետք է դու հնազանդվես մարդկային իշխանություններին:

46. (6) Ինչպե՞ս պետք է վարվել, երբ քեզ ասում են, որ սխալ բան անես (գրի՛ր 3 օրինակներ):

47. (6) Որո՞նք են հնազանդության 3 մակարդակները:

48. (5) Որո՞նք են անհնազանդության հետևանքները (արդյունքները) գրի՛ր 5 օրինակներ:

49. (4) Ո՞ր 2 բաները պետք է ներառված լինեն անձնական պաշտամունքի մեջ:

<u>ԲԱՌԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ</u>. Բացատրի՛ր, թե ինչ են նշանակում հետևյալ բառերը (յուրաքանչյուրը 3 միավոր):

50. Հավատ

51. Վերաբերմունք

52. Փորձություն

53. Վստահություն

54. Աղոթք

Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար
Ավարտական քննություն 2, Էջ 4

55. Հաղորդություն
56. Եկեղեցի
57. Վկայություն
58. Մեղք
59. Ճշմարիտ քրիստոնյա
60. Անձնական իրավունք
61. Պատասխանատվություն
62. Արտոնություն
63. Կրկնակի անկում
64. Վերականգնում

65. Գրի՛ր 10 անգիր համարներ, որոնք սովորել ես այս դասերի ընթացքում (յուրաքանչյուրը 3 միավոր):

Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար: Ավարտական քննություններ 2-րդ: Պատասխաններ (5-րդ խմբագրում):

Այս քննության համար բավականին շատ հարցեր կարելի է ուղղակի մեջբերել ԽՈՒՆՔՀ-ի 14 դասընթացներից: Ընդ որում, որոշ ուսանողներ կարող են այնպիսի պատասխաններ տալ, որոնք ճիշտ են, եթե նույնիսկ ներառված չեն ԽՈՒՆՔՀ-ի՝ ուսանողի նյութերում: Այդ պատասխանները գնահատելու համար օգտագործի՛ր քո սեփական դատողությունը:

Որոշ դեպքերում կարող է ուսանողից պահանջվել, որ որևէ հարցի համար երեք պատասխան գրի: ԽՈՒՆՔՀ-ի դասերում կարող է լինել 5 ճիշտ պատասխան: Մենք այդ 5 ճիշտ պատասխանները գրել ենք *Պատասխանների* մեջ, և ուսանողը լիարժեք գնահատական կարող է ստանալ երեք ճիշտ պատասխան տալու դեպքում:

Փակագծերում եղած թիվը ցույց է տալիս, թե քանի միավոր արժե հարցը: Ընդհանուր քննությունն իր մեջ պարունակում է 400 միավոր (ճիշտ պատասխանների ընդհանուր թիվը բաժանի՛ր 4-ի՝ իմանալու համար քո միավորը 100%-ի չափանիշի հիման վրա):

Յուրաքանչյուր հարցի վերջում այն հապավումն է, որի վրա հիմնված է ԽՈՒՆՔՀ-ի դասընթացներից որի վրա է այս հարցը հիմնված: Ահա այդ դասընթացների անունները և հապավումները, որոնք օգտագործված են այս պատասխանների մեջ:

ԱՁՄ	Աճել ձախողումների միջոցով:
ԱՓՄՀ	Անձնական փոխհարաբերություններ մարդկանց հետ:
ԲԱԻ	Բարկություն և անձնական իրավունքներ:
ԹՀԱ	Թռուցիկ հայացք Աստվածաշնչին:
<u>ԻԿԻՃՔ</u>	Ինչպե՞ս կարող եմ իմանալ, որ ճշմարիտ քրիստոնյա եմ:
ԻՈՒԱ	Ինչպես ուսումնասիրել Աստվածաշունչը:
Հ Աստծուն	Հնազանդություն Աստծուն:
Հ մարդուն	Հնազանդություն մարդուն:
ՀՁԳ	Հոգևոր զորությունը և գերբնականը:
ՀՔԿ	Հաջողակ քրիստոնեական կենսակերպ:
ՍԻ	Սեր և ինքնաընդունում:
Վերա	Վերաբերմունքներ:
Փորձ	Փորձություններ:
ՔՊ	Քրիստոնեական պրակտիկա:

Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար: Ավարտական քննություններ 2-րդ: Պատասխաններ, էջ 2

1. (6 միավոր, յուրաքանչյուրը 2 միավոր, ԹՀԱ)

   Ա. Քանի՞ գրքից է կազմված Աստվածաշունչը: (66)
   Բ. Քանի՞ գրքից է կազմված Հին Կտակարանը: (39)
   Գ. Քանի՞ գրքից է կազմված Նոր Կտակարանը: (27)

2. Գրի՛ր Նոր Կտակարանի գրքերի բաժանումներն ու անվանումները (32 միավոր, յուրաքանչյուրը 1 միավոր, ԹՀԱ):

Жакшы Кабарлар	**Пабылдын каттары**	**Негизги каттар**
Матай	Римдиктерге	Эврейлерге
Марк	1 Корунттуктарга	Жакып
Лука	2 Корунттуктарга	1 Петир
Жакан	Галатиялыктарга	2 Петир
	Эфестиктерге	1 Жакан
Жыйындын тарыхы	Филипиликтерге	2 Жакан
Элчилердин иштери	Колосалыктарга	3 Жакан
	1 Тесалоникалыктарга	Жүйүт
	2 Тесалоникалыктарга	
	1 Тиметейге	**Пайгамбарчылыктар китеби**
	2 Тиметейге	Аян
	Титке	
	Филимонго	

3. Գրի՛ր 4 փաստարկներ, որոնք ապացուցում են Աստվածաշնչի ճշգրիտ (հուսալի, ճիշտ) լինելը (12 միավոր, յուրաքանչյուրը 3 միավոր, ԹՀԱ):

   ա. Բոլոր մարգարեությունները ճիշտ են եղել և ճշգրիտ կատարվել են:
   բ. Աստվածաշունչն ասում է, որ այն Աստծո Խոսքն է:
   գ. Հիսուսն ասաց, որ այն Աստծո Խոսքն է:
   դ. Աստվածաշնչում հակասություններ չկան:
   ե. Հնէաբանական ապացույցներ:
   զ. Բժշկական ապացույցներ:
   է. Ես կարող եմ դրանում համոզվել՝ ստուգելով այդ ուսուցումներն իմ կյանքում:

4. Բացատրի՛ր, թե ինչ է նշանակում՝ «Աստվածաշունչը ներշնչված է Աստծո կողմից» (10 միավոր, ԹՀԱ):

   Սուրբ Հոգին ուղղորդել է այդ մարդկանց մտքերը, որպեսզի նրանք գրեն այն, ինչ Աստված է ուզում, որ գրեն:

Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար: Ավարտական քննություններ 2-րդ: Պատասխաններ, Էջ 3

5. (6 միավոր, յուրաքանչյուրը 3 միավոր, ԹՀԱ):

   Ա. Ի՞նչ լեզվով է գրվել Հին Կտակարանը: Եբրայերեն (և արամեերեն)
   Բ. Ի՞նչ լեզվով է գրվել Նոր Կտակարանը: Հունարեն

6. Ո՞րն է Աստվածաշնչի ամենակարևոր դեպքը (5 միավոր, ԹՀԱ):

   Հիսուսի հարությունը:

7. Ո՞րն է մարգարեության նպատակն Աստվածաշնչում
   (5 միավոր: Նրանցից չի պահանջվում գրել բոլոր պատասխանները, ԹՀԱ):

   ա. Ապացուցել Աստվածաշնչի ճշգրտությունը:
   բ. Հույս տալ հավատացյալներին:
   գ. Մղել մարդկանց, որպեսզի ավելի մոտենան Աստծուն:
   դ. Այն չպետք է օգտագործվի ապագան գուշակելու համար:

8. Ո՞ր երեք տեղերում կարող ես գտնել փաստարկներ, որ ճշմարիտ դու քրիստոնյա ես (3 մասից պատասխան, 9 միավոր, յուրաքանչյուրը 3 միավոր, ԻԿԻՃՔ):

   ա. Աստվածաշունչ:
   բ. Սուրբ Հոգի:
   գ. Իմ կյանքի փոփոխությունները:

9. Գրի՛ր 4 փոփոխությունների օրինակներ, որոնք տեղի են ունենում մարդու կյանքում ճշմարիտ քրիստոնյա դառնալուց հետո
   (8 միավոր, յուրաքանչյուրը 2 միավոր, ԻԿԻՃՔ):

   ա. Դու նոր հասկացողություն կունենաս, թե որն է ճիշտ և որը՝ սխալ:
   բ. Դու Աստվածաշնչի հանդեպ նոր սեր (հետաքրքրություն) կունենաս:
   գ. Դու փափագ կունենաս՝ նմանվել Հիսուսին:
   դ. Դու ավելի շատ փորձություններ, գայթակղություններ և խնդիրներ կունենաս:
   ե. Դու սեր կունենաս մարդկանց հանդեպ, հատկապես՝ հավատացյալների:
   զ. Դու կցանկանաս Հիսուս Քրիստոսի մասին կիսվել մարդկանց հետ:

10. Ի՞նչ է նշանակում անձնական փոխհարաբերություն ունենալ Հիսուս Քրիստոսի հետ (5 միավոր, ԻԿԻՃՔ):

    Առաջարկվող պատասխան.

    Երբ ես դառնում եմ ճշմարիտ քրիստոնյա, պետք է անձամբ ծանոթանամ Հիսուս Քրիստոսի հետ: Ես կարիք ունեմ սիրո հիման վրա ընկերանալ Նրա հետ: Ես Նրա հետ խոսել սովորելու կարիք ունեմ: Հիսուսի հետ լինել «ամենամոտիկ ընկերներ»:

Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար: Ավարտական քննություններ 2-րդ: Պատասխաններ, Էջ 4

11. Երբ մարդը կասկածներ է ունենում, իր՝ ճշմարիտ քրիստոնյա լինելու հարցում, ապա որտեղի՞ց են գալիս այդ կասկածները (գրի՛ր 2 պատասխան, 4 միավոր, յուրաքանչյուրը 2 միավոր, ԻԿԻՃՔ):

    ա. սատանայից,
    բ. Աստծուց,
    գ. մարդկանցից,
    դ. ինձնից:

12. Ո՞ր 4 խնդիրները կարող են պատճառ հանդիսանալ մարդու համար, որպեսզի կասկածներ ունենա, թե արդյո՞ք ինքը ճշմարիտ քրիստոնյա է (4 միավոր, յուրաքանչյուրը 1 միավոր, ԻԿԻՃՔ):

    ա. Երբ դրական զգացմունքները դադարում են:
    բ. Երբ շարունակում ես մեղք գործել կամ ձախողվել:
    գ. Երբ Հիսուսին տալիս ես կյանքիդ միայն մի մասը:
    դ. Երբ ծածուկ ես քրիստոնյա դառնում:
    ե. Փորձությունները:
    զ. Երբ դառնություն ունես ինչ-որ մեկի հանդեպ:
    ե. Երբ աղոթքներիդ պատասխան չես ստանում:
    զ. Երբ չես ցանկանում ուղղել անցյալի սխալը կամ թերությունը:
    է. Վախը:
    ը. Հպարտությունը:

13. Ինչպե՞ս մարդը կարող է ազատվել ճշմարիտ քրիստոնյա լինելու կասկածներից (5 միավոր, ԻԿԻՃՔ):

    Կա պատասխանների երկու հնարավոր շարք, որ ուսանողները կարող են տալ, դրանք վերցված են իրենց դասարանական նշումներից:

    <u>Շարք 1.</u>
    ա. Ընդունի՛ր, որ դու կասկածներ ունես:
    բ. Սկսի՛ր Աստծո հետ խոսել այդ մասին:
    գ. Քննի՛ր քո կասկածները (պարզի՛ր, թե որն է այդ կասկածների պատճառը):
    դ. Հարցրո՛ւ Աստծուն, թե ինչ ձևով է Նա ուզում, որ ազատվես այդ կասկածներից:
    ե. Նպատակնե՛ր դիր, որոնք քեզ կօգնեն Աստծո ուզած ձևով ազատվել այդ կասկածներից:

    <u>Շարք 2.</u>

    ա. Գրի՛ր այն իրավիճակները, որոնք պատճառ են դառնում այդ կասկածների համար:
    բ. Աստծուն հարցրո՛ւ. «Աստվա՛ծ, Դու ի՞նչ ես ուզում ինձ այսօր սովորեցնել»:

    Պատասխանները շարունակվում են հաջորդ էջում

Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար: Ավարտական քննություններ 2-րդ: Պատասխաններ, Էջ 5

13. Շարունակություն
    գ. Քո կյանքում գտի՛ր մի ասպարեզ, որտեղ աճելու կարիք ունես:
    դ. Կապի՛ր դա քո աստվածաշնչյան ուսումնասիրության հետ:
    ե. Գրի՛ր գործողություններ, որոնք դու կարող ես ավարտել այսօր:
    զ. Գնահատի՛ր արդյունքները (դա օգնե՞ց քեզ, որ ազատվես այդ կասկածներից):

14. Հունարեն ո՞ր երեք բառերն են նշանակում «սեր»: Ի՞նչ է դրանցից յուրաքանչյուրը նշանակում (6 միավոր, յուրաքանչյուրը 1 միավոր, ՍԻ):

    ա. Էրոս. զգայական ցանկությունների և սեռական մղումների վրա հիմնված սեր: Այն ընդամենը վերաբերում է մարմնական մղումներին:
    բ. Ֆիլեո. Դրսևորվում է ընկերության շրջանակներում: Այն ընդամենը վերաբերում է մարդու հոգեբանական մասին: Զգացմունքային ապրում:
    գ. Ագապե. Աստծո սերը: Սիրո ամենամաքուր և ամենախորը տեսակը: Այն դրսևորվում է որպես մարդու կամքի արտահայտություն: Սեր առանց նախապայմանների:

15. Ի՞նչ <u>չպետք</u> է սիրի ճշմարիտ քրիստոնյան (գրի՛ր 2 բան, 4 միավոր, յուրաքանչյուրը 2 միավոր, ՍԻ):

    ա. մեղք,
    բ. փող,
    գ. սատանա:

16. Ա Կորնթացիներին 13-րդ գլխից դո՛ւրս գրիր սիրո 5 բնութագրիչներ (10 միավոր, յուրաքանչյուրը 2 միավոր, ՍԻ):

    Պատասխանները հիմնված են ըստ Ա Կորնթացիներին 13-րդ գլխի: Այս պատասխաններն Աստվածաշնչի TBS թարգմանությունից են: Պատասխաններն ընդունելի են Աստվածաշնչի բոլոր թարգմանություններից:

    ա. Սերը համբերող է:
    բ. Սերը բարի է:
    գ. Սերը չի նախանձում:
    դ. Սերը չի գոռոզանում:
    ե. Սերը չի հպարտանում:
    զ. Սերն անվայել վարմունք չի ունենում:
    է. Սերն իրենը չի փնտրում:
    ը. Սերը հեշտությամբ չի գրգռվում:
    թ. Սերը չար բան չի մտածում:

Պատասխանները շարունակվում են հաջորդ էջում

Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար: Ավարտական քննություններ 2-րդ: Պատասխաններ, Էջ 6

16. Շարունակություն
    ժ. Սերն անիրավության վրա չի ուրախանում:
    ի. Սերն ուրախանում է ճշմարտության համար:
    լ. Սերն ամեն բան կրում է:
    խ. Սերն ամեն բանի հավատում է:
    ծ. Սերն ամեն բանի հույս ունի:
    կ. Սերն ամեն բանի համբերում է:
    հ. Սերը երբեք չի վերջանում:

17. Որո՞նք են 3 արմատական խնդիրները, որոնք պատճառ են հանդիսանում մարդու մյուս բոլոր խնդիրների համար (12 միավոր, յուրաքանչյուրը 4 միավոր, ԱՁՄ):

    ա. Դառնություն, սրտնեղություն, կամ ատելություն:
    բ. Նյութական բարիքներ
    (երբ քո արժեքները տեսնում ես անցողիկ բաների մեջ):
    գ. Անբարոյություն (սեռական մեղքեր):

18. Ինչպե՞ս կարող է մարդն ինքն իրեն ընդունել
(գրի՛ր 3 բաներ, 12 միավոր, յուրաքանչյուրը 4 միավոր, ՍԻ):

    ա. Լավ զննեմ ինքս ինձ (տեսնեմ, թե ինչպես է Աստված ինձ ստեղծել):
    բ. Շնորհակալություն հայտնեմ Աստծուն, որ ինձ այսպիսին է ստեղծել:
    գ. Աշխատեմ իմ մեջ ներքին դրական որակներ զարգացնելու վրա:

19. Որո՞նք են ամուսնության երեք փուլերն ըստ Մատթեոս 19.5-ի
(15 միավոր, յուրաքանչյուրը 2 միավոր, ԱՓՄՀ):

    ա. Թողնել.
        (1) ֆիզիկապես. օրինական ամուսնություն. առանձին տուն ունենալ
        (2) զգացմունքային. ամուսնանալ ծնողների համաձայնությամբ և Աստծո համաձայնությամբ:
    բ. Միանալ քո կողակցի հետ.
        (1) ֆիզիկապես ապրել միասին:
        (2) հոգեբանորեն. սիրել միմյանց և հավատարիմ լինել:
    գ. Մեկանալ.
        (1) ֆիզիկապես. սեռական հարաբերություն:
        (2) հոգեբանորեն. կյանքում ունենալ նմանատիպ վերաբերմունքներ և նպատակներ:
        (3) հոգևոր. ունենալ հոգևոր նույն նպատակները, երկուսով ծառայել Աստծուն:

Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար: Ավարտական քննություններ 2-րդ: Պատասխաններ, Էջ 7

20. Որո՞նք են Աստվածաշնչի ուսումնասիրության 3 հիմնական քայլերը: Բացատրեք, թե ինչ է դրանցից յուրաքանչյուրը նշանակում. (9 միավոր. 1 միավոր՝ 3 քայլերից յուրաքանչյուրի համար, 2 միավոր՝ յուրաքանչյուր բացատրության համար, թե ինչ է քայլերից յուրաքանչյուրը նշանակում, ԻՈՒԱ):

    ա. Փաստեր ձեռք բերել: Իմանալ, թե ինչ է ասում Սուրբ Գիրքը:
    բ. Հասկանալ իմաստը: Ի՞նչ իմաստ ունի ինձ համար այս գրվածքը (կապել սեփական կյանքի հետ):
    գ. Անձնական կիրառություն: Ինչպե՞ս կարող եմ այս ճշմարտություններն այսօր կիրառել իմ կյանքում. Անելով դա: Իրականում ճշմարտությունները գործի դնելով:

21. Ինչո՞ւ է կարևոր համարներ անգիր անելը (գրի՛ր 2 պատճառ: 4 միավոր, յուրաքանչյուրը 2 միավոր, ԻՈՒԱ):

    Առաջարկվող պատասխաններ.

    ա. Օգնում է քեզ, որպեսզի մտածես այնպես, ինչպես Աստված է մտածում:
    բ. Նախապատրաստում է քեզ Աստծո Խոսքի վրա մտածելու համար:
    գ. Օգնում է քեզ լավ մտքեր ունենալ:
    դ. Օգտակար է փորձություններ հաղթահարելիս:
    ե. Օգտակար է քո խնդիրները լուծելու համար:
    զ. Օգնում է նախապատրաստվելուն քո վկայության համար:

22. Ո՞րն է Աստծո Խոսքն անգիր անելու և Աստծո Խոսքի վրա մտածելու տարբերությունը (4 միավոր, ԻՈՒԱ):

    Անգիր անել պարզապես նշանակում է իմանալ դա: Մտածելն այն դարձնում է քո մի մասը: Անգիր անել նշանակում է կարողանալ մեջբերել դա: Մտածելը թույլ է տալիս, որ Խոսքը խորը մխրճվի քո մտքերի մեջ, որպեսզի այն դառնա քո մտքերի մի մասը:

23. Որտեղի՞ց է գալիս հավատը (4 միավոր, ՀՁԳ):

    Հավատը, ինչպես դասարանում է սահմանվել, գալիս է միայն Աստծուց:

24. Որտեղի՞ց է գալիս հավատալիքը (4 միավոր, ՀՁԳ):

    Հավատալիքը գալիս է քո ներսից, քո մտքից:

Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար: Ավարտական քննություններ 2-րդ: Պատասխաններ, էջ 8

25. Որտեղի՞ց է մարդը հավատ ձեռք բերում
(6 միավոր, յուրաքանչյուրը 3 միավոր, ՀՁԳ):

ա. Պատրաստվի՛ր հավատ ձեռք բերելու համար:
(1) Պետք է հասկանաս և հավատաս, թե ինչ է ասում Աստվածաշունչը հավատի մասին:
(2) Աստծուն ավելի լա՛վ ճանաչիր:
բ. Պետք է հասկանաս, թե ինչպես է Աստված ուզում, որ օգտագործես Նրա տված հավատը:
գ. Աղոթի՛ր և Աստծուց հավա՛տ խնդրիր:

26. Որտեղի՞ց է մարդը հավատալիք ձեռք բերում (5 միավոր, ՀՁԳ):

Հավատալիքը մի բան է, որը դու ես անում: Դու ես որոշում հավատալ՝ ինչին որ ուզում ես: Դու մտքով համաձայնում ես փաստերի հետ:
Հավատալու համար դու մարդկանց օգնության կարիքը չունես:

27. Ինչպե՞ս կարող ես իմանալ, որ հավատ ունես (5 միավոր, ՀՁԳ):

ա. Աստված քեզ խորը զգացողություն (համոզվածություն) է տալիս, որ դու ստացել ես Նրա հավատը:
բ. Գործնական կերպո՛վ օգտագործիր հավատը քո կյանքում:
Սա լավագույն ձևն է ապացուցելու համար, որ դու հավատ ունես:

28. Ինչի՞ համար ես դու հավատն օգտագործում
(6 միավոր, յուրաքանչյուրը երկու միավոր, ՀՁԳ):

ա. Ճշմարիտ քրիստոնյա դառնալու համար (փրկություն):
բ. Որպեսզի շարունակես մնալ ճշմարիտ քրիստոնյա:
գ. Աստծո կամքն անելու:
դ. Մեղքի վրա իշխանություն ունենալու: Ա հովհաննես 5.4-5
ե. Դժվարություններն ու խնդիրները հաղթահարելու համար:
զ. Բժշկվելու համար:
է. Փորձությունները հաղթահարելու համար:
ը. Աստծո օրենքներին հնազանդվելու համար:
թ. Ներկայիս կարիքների համար (դու չես կարող հավատ պահեստավորել ապագա կարիքների համար):

29. Ո՞ր 3 մասերից է մարդը բաղկացած
(3 միավոր, յուրաքանչյուրը 1 միավոր, ՀՔԿ):

ա. ֆիզիկական մարմին		ա. ֆիզիկական մաս
բ. իմ ինքնությունը	կամ	բ. հոգեբանական մաս
գ. իմ հոգին		գ. հոգևոր մաս

Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար: Ավարտական քննություններ 2-րդ: Պատասխաններ, Էջ 9

30. Ի՞նչ պետք է անի մարդը, եթե ձախողվել է
(գրի՛ր 4 տարբերակներ, 4 միավոր, ԱՁՄ):

1. Պետք է ընդունեմ, որ սխալվել եմ:
2. Պետք է խնդրեմ, որ Աստված ների ինձ:
3. Պետք է ներեմ ինքս ինձ:
4. Պետք է որոշում կայացնեմ, որ դադարեմ մեղք գործել:
5. Ներում խնդրեմ նրանցից, ում նեղացրել եմ:
6. Գտնեմ ձախողման պատճառը:
7. Փնտրեմ այդ ձախողումից դուրս գալու՝ Աստծո ճանապարհը:
8. Թույլ տամ, որ մարդիկ ինձ ասեն իմ խնդիրների մասին:
9. Շարունակեմ աճել:

31. Ի՞նչ կապ ունեն իմ անձնական իրավունքներն իմ բարկության հետ
(4 միավոր, ԲԱԻ):

Առաջարկվող պատասխան. Երբ մենք կառչում ենք մեր անձնական իրավունքներից, հեշտ է բարկության մեջ ընկնել, երբ ինչ-որ մեկը խախտում է մեր անձնական իրավունքներից որևէ մեկը:

Ահա մի փոքր ավելի մանրամասն, թե ինչ է այն ներառում. Եթե ես իմ անձնական իրավունքները տամ Աստծուն, այլևս կառչած չեմ լինի այն ակնկալիքից, թե ինչ կանեն մյուսները: Ես այլևս պահանջ չեմ դնի նրանց վրա, որ վարվեն ըստ իմ սահմանած անձնական իրավունքների: Երբ ես իմ անձնական իրավունքները տալիս եմ Աստծուն, կարող եմ Աստծո հետ խաղաղության մեջ լինել, որ Նա ինձ հետ կլինի և կօգնի գտնել նոր ձևեր՝ մարդկանց գործողություններին արձագանքելու համար:

32. Որո՞նք են հաջողակ քրիստոնյա դառնալու 5 քայլերը
(10 միավոր, յուրաքանչյուրը 2 միավոր, ՀՔԿ):

ա. Դառնալ ճշմարիտ քրիստոնյա:
բ. Փոխել մտածելակերպը:
գ. Նոր նպատակներ դնել:
դ. Սովորել ղեկավարել սեփական զգացմունքները:
ե. Կիսվել մարդկանց հետ այն մասին, թե ինչ է Քրիստոսն արել իմ կյանքում:

Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար: Ավարտական քննություններ 2-րդ: Պատասխաններ, Էջ 10

33. Ի՞նչ պետք է անի մարդը իր սխալ մտքերի հետ (փորձություններ), (6 միավոր, յուրաքանչյուրը 1 միավոր, Փորձ):

(Ինչպե՞ս կարող է մարդը հաղթահարել այդ խնդիրը):

ա. Ընդունի, որ փորձության մեջ է:
բ. Սկսի Աստծո հետ խոսել իր փորձության մասին:
գ. Հեռանա այն ամենից, ինչը փորձության պատճառ է դառնում:
դ. Հարցնի ինքն իրեն. «Ի՞նչ կարիք է սատանան փորձում ինձ բավարարել տալ»:
ե. Հարցնի Աստծուն, թե ինչպես է Նա ուզում, որ ինքը բավարարի այդ կարիքը:
զ. Նպատակներ դնի, որոնք իրեն կօգնեն՝ իր կարիքը բավարարել Աստծո ասած ձևով:

34. Որո՞նք են ամենօրյա լավ նպատակի երեք նշանները (6 միավոր, յուրաքանչյուրը երկու միավոր, ՀՔԿ):

ա. Այն պարզ է, այն մեկ բան է ասում:
բ. Այն կոնկրետ է, այն հստակ շարադրում է նպատակը:
գ. Այն իմաստալից է, այն կապ ունի իմ կյանքի հետ:
դ. Այն գործնական է, և ես այսօր կարող եմ այն կատարել:
ե. Այն չափելի է:
զ. Այն օգնում է ինձ:

35. Ո՞վ է Սուրբ Հոգին (4 միավոր, ՀՔԿ):

Նա անձնավորություն է: Նա Աստված է: Նա հավասար է Հայր Աստծո և Հիսուս Քրիստոսի հետ:

36. Ի՞նչ է անում Սուրբ Հոգին այսօր (գրի՛ր 3 բաներ, 6 միավոր, յուրաքանչյուրը երկու միավոր, ՀՔԿ):

ա. Հանդիմանում է մեղքի համար:
բ. Մոտեցնում է Քրիստոսին:
գ. Առաջնորդում է ճշմարտության մեջ:
դ. Օգնում է:
ե. Տալիս է Իր պարգևները:

37. Ո՞րն է Սուրբ Հոգով մկրտվելու նպատակը (5 միավոր, ՀՔԿ):

Սուրբ Հոգու մկրտությունն Աստծուց պարգև է, որպեսզի օգնի քեզ՝ դառնալ ավելի ուժեղ և հաջողակ քրիստոնյա:

Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար: Ավարտական քննություններ 2-րդ: Պատասխաններ, Էջ 11

38. Ինչո՞ւ ենք մենք հաղորդություն անում
(գրի՛ր 3 տարբերակներ: 6 միավոր, յուրաքանչյուրը 2 միավոր, ՔՊ):

ա. Աստծուն երկրպագելու համար:
բ. Հիշելու, որ Հիսուսը մահացավ մեզ համար:
գ. Այն մեզ հիշեցնում է, որ Հիսուսը նորից հետ է գալու:
դ. Այն քեզ հնարավորություն է տալիս՝ նայել քո ներսը (քննել քո կյանքը):
ե. Դու կարող ես վերանայել մարդկանց հետ քո փոխհարաբերությունները:

39. Ինչո՞ւ պետք է քրիստոնյան ջրով մկրտվի (6 միավոր, ՔՊ):

ա. Աստծուն հնազանդվելու համար:
բ. Դա հրապարակային վկայություն է, որ նա դառնում է քրիստոնյա:
գ. Դա ևս մեկ քայլ է իր հոգևոր աճի մեջ:

40. Ինչպե՞ս կարող է հավատացյալը լինել Աստծո տնտես (5 միավոր, ՔՊ):

ա. Հավասարակշռված աճը լավ տնտեսի հիմնական բնութագրիչներից մեկն է:
բ. Լավ տնտեսը սովորում է լավ վերաբերվել մյուս հավատացյալների հետ:
գ. Աստծո հետ մտերիմ հաղորդակցություն զարգացնելով:
դ. Աստծուն սիրելով և իր սերը մարդկանց հանդեպ դրսևորելով:
ե. Լավ տնտեսը հավատարիմ է (նվիրված և կայուն):
զ. Հնազանդությունը կյանքի մի կենսակերպ է, որը բնութագրում է Աստծո լավ տնտեսին:
է. Իր ժամանակը լավ կառավարելով:
ը. Աշխատանքի հանդեպ ճիշտ վերաբերմունք ունենալով:
թ. Իր ունեցվածքը ճիշտ օգտագործելով:

41. Ո՞րն է տեղական եկեղեցու նպատակը (4 միավոր, ՔՊ):

ա. Տեղական եկեղեցու գոյության հիմնական նպատակը հավատացյալներին օգնելն է, որպեսզի հոգևորապես ավելի ուժեղ դառնան:
բ. Որպեսզի Քրիստոսի մասին կիսվեն ոչ ճշմարիտ քրիստոնյաների հետ:

42. Որո՞նք են Աստվածաշնչի 2 ամենամեծ օրենքները
(4 միավոր, յուրաքանչյուրը 2 միավոր, Հ Աստծուն):

ա. Սիրի՛ր քո Տեր Աստծուն ամբողջ սրտով, ամբողջ անձով, ամբողջ մտքով ու ամբողջ զորությամբ: Մարկոս 12.30
բ. Դրացուդ սիրի՛ր անձիդ պես: Մարկոս 12.31:

Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար: Ավարտական քննություններ 2-րդ: Պատասխաններ, Էջ 12

43. Ինչո՞ւ է մարդը բարկանում (4 միավոր, ԲԱԻ):

Երբ ինչ-որ մեկը խախտում է նրա անձնական իրավունքները, նա բարկանում է հատկապես այն դեպքում, եթե իր այդ անձնական իրավունքն Աստծուն չի տվել:

44. Ինչպե՞ս կարող է հավատացյալն Աստծուն ցույց տալ, որ սիրում է Նրան (գրի՛ր 2 տարբերակներ: 4 միավոր, յուրաքանչյուրը 2 միավոր, Հ Աստծուն):

ա. Աստծո օրենքներին հնազանդվելով:
բ. Հնազանդվելով Աստծո օրենքների հետևում եղած սկզբունքներին:
գ. Հնազանդ վերաբերմունք զարգացնելով:
դ. Անձնական իրավունքներն Աստծուն տալով:
ե. Անելով այն, ինչ Աստված է ուզում, որ անի (կատարել Աստծո կամքը):

45. Ինչո՞ւ պետք է դու հնազանդվես մարդկային իշխանություններին (5 միավոր, Հ մարդուն):

ա. Աստված ինձ պատվիրել է, որ հնազանդվեմ իմ առաջնորդներին: Հռոմեացիներին 13.1-2
բ. Աստված նրանց իշխանություն է տվել ինձ վրա: Նրանց հնազանդվելով՝ ես իրականում հնազանդվում եմ Աստծուն, Ով այդ մարդկանց օգտագործում է ինձ օգնելու համար:

46. Ինչպե՞ս պետք է վարվել, երբ քեզ ասում են, որ սխալ բան անես (գրի՛ր 3 տարբերակներ: 6 միավոր, յուրաքանչյուրը 2 միավոր, Հ մարդուն):

ա. Պարզեմ բուն պատճառը, թե ինչո՛ւ է իմ առաջնորդն ինձ հանձնարարում, որ դա անեմ:
բ. Եթե բուն պատճառը, թե ինչու է իմ առաջնորդն ինձ ասում, որ դա անեմ, իմ բարու համար է (ոչ մեղք), ապա ես պատասխանատվություն ունեմ հնազանդվելու:
գ. Եթե բուն պատճառը, թե ինչու է իմ առաջնորդն ինձ ասում, որ դա անեմ, ինձ մեղքի մեջ գցելն է, ես պատասխանատվություն ունեմ չհնազանդվելու իմ առաջնորդին:

47. Որո՞նք են հնազանդության 3 մակարդակները (6 միավոր, յուրաքանչյուրը 2 միավոր, Հ մարդուն):

Պատասխանները պետք է լինեն ճիշտ հերթականությամբ.

ա. Հնազանդվել (որովհետև ինձ ասել են, որ դա անեմ):
բ. Հնազանդվել և պարզել հիմնական պատճառը, թե ինչու է իմ առաջնորդն ինձ ասում, որ դա անեմ:
գ. Իմ կամքով հնազանդվել (որովհետև այդպես անելը ճիշտ է):

Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար: Ավարտական քննություններ 2-րդ: Պատասխաններ, Էջ 13

48. Որո՞նք են անհնազանդության հետևանքները (արդյունքները) գրի՛ր 5 տարբերակներ: (5 միավոր, յուրաքանչյուրը 1 միավոր, Հ Աստծուն և Հ մարդուն):

    Օգտագործի՛ր քո սեփական հասկացողությունը՝ պատասխանները գնահատելու համար:

49. Ո՞ր 2 բաները պետք է ներառված լինեն անձնական պաշտամունքի մեջ (4 միավոր, յուրաքանչյուրը 2 միավոր, ԻՌուԱ):

    ա. Աստվածաշնչի ընթերցանություն:
    բ. Աղոթք:

<u>ԲԱՌԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ</u>. Բացատրե՛ք, թե ինչ են նշանակում այս բառերը (յուրաքանչյուրը 3 միավոր): Ուսանողները կարող են տարբեր սահմանումներ տալ այս բառերին: Օգտագործի՛ր քո սեփական դատողությունը՝ որոշելու համար, թե արդյո՞ք լիարժեք միավոր կտաս այն պատասխաններին, որոնք տարբեր կլինեն ներքևում նշվածներից:

50. **Հավատ**. Աստծուց եկած զորություն, որը միշտ մղում է գործողության (ՀԶԳ):

51. **Վերաբերմունք**. մտածելակերպ, մոտեցում, հաստատուն կարծիք, տեսակետ, տեսանկյուն (ՀՔԿ, Վերա):

52. **Փորձություն**. սատանան փորձում է ինձ դրդել, որպեսզի խախտեմ Աստծո օրենքները և այդ ձևով բավարարեմ իմ կյանքի կարիքը կամ ցանկությունը (Փորձ):

53. **Վստահություն**. ինչ-որ մեկից կախված լինել, ապավինել (*հավատ*, *հավատալիք* կամ *հույս* բառերն այս սահմանման համար ընդունելի չեն), (ՀԶԳ):

54. **Աղոթք**. խոսակցություն Աստծո հետ (ՔՊ):

55. **Հաղորդություն**. եկեղեցական հատուկ ծառայություն՝ Հիսուս Քրիստոսի մահն ու հարությունը հիշելու համար (ՔՊ):

56. **Եկեղեցի**. (հնարավոր են տարբեր սահմանումներ), (ՔՊ):

    * Կրոնական պաշտամունքի համար գործածվող շինություն:
    * Համայնք, մարդկանց խումբ, որում նույն հավատալիքներն ունեն, և նրանք պարբերաբար հավաքվում են մեկտեղ:
    * Հարանվանություն:
    * Աշխարհի բոլոր քրիստոնյաները:
    * Կրոնական ժողով:

Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար: Ավարտական քննություններ 2-րդ: Պատասխաններ, Էջ 14

57. **Վկայություն**. կիսվել մարդկանց հետ, թե ինչ է արել և շարունակում է անել Քրիստոսն իմ կյանքում (ՔՊ):

58. **Մեղք**. անհնազանդություն Աստծո օրենքներին (ԻԿԻՃՔ):

59. **Ճշմարիտ քրիստոնյա**. մարդ, որն իր մեղքերը խոստովանել է Հիսուս Քրիստոսին և ներում է խնդրել Նրանից: Այս մարդը թույլ է տվել Հիսուսին՝ դառնալ իր կյանքի Առաջնորդը (ԻԿԻՃՔ):

60. **Անձնական իրավունք**. կանոն, որը ես սահմանել եմ ինձ համար և ակնկալում եմ, որ մյուսները հնազանդվեն դրան (ԲԱԻ):

61. **Պատասխանատվություն**. մի բան, որ քեզ տվել են, որ անես (հիմնականում տվել են առաջնորդները) (ԲԱԻ):

62. **Արտոնություն**. պարգև, որը դու չես վաստակել և չես ակնկալում: Մի բան, որը դու չես կարող պահանջել: Պատիվ: Հատուկ մի բան (ԲԱԻ):

63. **Կրկնակի անկում**. հետ գնալ մեղքի հին իրավիճակի մեջ (օգտագործել թմրանյութեր կամ այլ վատ բաներ) (ԱՁՄ):

    Մեկ այլ սահմանում, որը տրված է ԱՁՄ-ի՝ Ուսանողի ձեռնարկում, ասում է. «Կրկնակի անկումը չի սկսվում առաջին բաժակը խմելով: Կրկնակի անկումը սկսվում է, երբ մարդը սկսում է հերքել իր խնդրի գոյությունը, մեկուսանալ, ուժեղ սթրես ապրել և սխալ դատողություններ ունենալ» (ԱՁՄ):

64. **Վերականգնում**. քայլ, որը մարդն անում է ձախողումից վերականգնվելու համար: Վերականգնումը նաև ներառում է սովորելը, թե ինչ քայլեր ձեռնարկես, որպեսզի նորից նույն սխալը չկրկնես (ԱՁՄ):

65. Գրի՛ր 10 անգիր համարներ, որոնք սովորել ես այս դասերի ընթացքում (յուրաքանչյուրը 3 միավոր: Նրանք պետք է ամբողջությամբ գրեն համարը, որպեսզի լիարժեք միավոր ստանան յուրաքանչյուր համարի համար):

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Տրվում է

_____-ին

առ այն, որ նա հաջողությամբ ավարտել է դասընթացների հետևյալ շարքը՝

ԽՄԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄՆԵՐ ՆՈՐԱԴԱՐՁ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հետևյալ ստորագրությունները հավաստում են Ձեր առաջադիմության մասին

_____ _____

Գործադիր տնօրեն Ծրագրի տնօրեն

Ամսաթիվ_____